

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՐԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍՏՔԻ ԱՆՕԹՈՒԹԻՒՆԸ

Երբոր անօրոշրեան աղաղակը ժողովրդի մը աղբերէն կը բարձրանայ, Գետառքեանց համար մեծ փոփոխութեան մը նշանն է առիկա: Բայց հոգիին անօրոշրեանը, մտքին անօրոշրեանը, ասիկա երկիւղալի չէ: Երբոր այս պետքը կը սկսի ազգ մը յիշել, աս ալ Պետառքեանց քունը խտովելոչ է:

Էյ, Պոլսոյ պատրիարքարանը Հայաստանի բարենոյ ըրողութեանց խնդիրը պաշտօնապէս նորէն բացաւ: Մին այս տողերը կը գրենք Օրմանեան պատրիարք զեռ տունը փակուած կը մնայ. մաղթենք որ հաստատման իրաւունքով մը զարմացնէ ամբողջ ազգը: Ան առեն հայ ժողովուրդը պիտի յօժարի երեք տարուան անցեալը պարզապէս բարեմտութեան մը սխալանքին վերադրել: Յոյս մըն է զոր կ'ուզենք տածել, առանց սակայն զօրաւոր հաւատքով մը ակնդէտ սպասելու: Պատրիարքական պահանջագիրը իր ամբողջութեամբը չհրատարակուեցաւ. չենք կարող կտոր բրդուն տեղեկութեանց վրայ հիմնուելով զայն քննադատել եւ ոչ ալ զրուատել. բայց կրնանք ապահովապէս ըսել թէ պատրիարքը մտաբերած չէ որ թիւրքիոյ Հայերը նիւթապէս չեն տառապիր միայն. հարստահարուած է եւ ազգային միտքը. ու այդ միտքն ալ իրեն սնունդը կ'ուզէ որպէս զի ապրի եւ ազգութիւնը ապրեցնէ: Պատրիարքին այս մտազուտը մեղադրելի չէ. թիւրքիոյ Հայերը ահա երեսուն տարի է որ ուղղակի սուլթաններէն սպասուած բարեկարգութեանց համար իրենց բոլոր ըղձանքը ամփոփած են «կենաց, պատուոյ, ընչից ապահովութիւն» բանաձեւին մէջ, այսինքն՝ կեանքը լոկ իր նիւթական կողմերովը իրենց հոգածութեան առարկայ ըրած են: Նոյն իսկ 1895 մայիս 11ի ծրագիրը ո՛ր եւ է տրամադրութիւն չէր պարունակիր Հայոց մտաւորական պէտքերուն զոհաց լանը համար: Աւանդութիւնը մինչեւ այսօր կը շարունակուի: Բայց յիշելու ենք որ մինչեւ 1870, երբ բարեկարգութեանց խնդիրը պաշտօնապէս բացուեցաւ, եւ անկէ մինչեւ 1880, Պերլինի վաղորդայնը, Դաննի ի նպաստ Հայոց մամուլին ո եւ է իրա-

ւունք մը ստանալու պէտք չի կար, ինչպէս, օրինակի համար, թիւրքիոյ մէջ ու արտասահման Հայոց ազատ երթեկցութիւնը հնարաւոր ընելու պահանջուած ոչ ոք մտքէն կ'անցընէր: Մինչեւ 1880 թիւրքիոյ Հայերը մամուլի եթէ ոչ կատարեալ բայց բարակաւ լայն ազատութիւն կը վայելէին: Ո՛չ գրքերու, ո՛չ հանդէսներու, ո՛չ օրական մամուլին համար նախարարը զրաքննութիւն հաստատուած էր: Բանաստեղծական, իմաստասիրական, գիտական ամէն տեսակ գրքեր եւ յօդուածներ, Հայոց պատմութիւն, հայկական հին ու նոր կեանքէ վէպեր, թատերագութիւնութիւններ, երգեր հատորով կամ թերթերու միջոցաւ հրատարակելու բացարձակ արտօնութիւն տրուած էր: Իրաւ է որ Պոլսոյ եւ Իզմիրի Հայերը միայն կրնային օգտուիլ այս առաւելութիւններէն, վասն զի Հայաստան տպարան հաստատելու արտօնութիւնը չէր տրուեր: Այս անպատեհութիւնը սակայն կրնար զարմանուիլ Հայաստանի գրողներուն ձեռագիրները Պոլիս տպագրելով: Սեղուած 1880 էն ետքը սկսաւ նախարարը զրաքննութեան հաստատմամբ, մամուլին իրաւունքները հետզհետէ խլուեցան, մինչեւ ոչ չընչացուած: Հիմակ թիւրքիոյ մէջ այլ եւս հայերէն գիրք չի հրատարակուիր. անմեղունակ քանի մը թարգմանութիւններ, թուաբանական կամ նմանօրինակ դասագրքեր ո՛ր եւ է յարաբերութիւն չունին մտքի շարժումին հետ: Ժամանակն է ուրեմն որ Հայոց մտքին հարստահարութիւնը այնքան հոգածութիւն գրաւէ որչափ մարմնինը:

Ժողովուրդ մը երբ իր կեանքը, պատիւը, ինչքը միայն ապահովուած տեսնելով կը զոհանայ, անասուններէն զգալի տարբերութիւն մը չունի: Ե՛ր մը եւ կով մը գոմին մէջ, առջեւին յարդ ե ջուր, երջանիկ են. կեանքի, ինչքի, պատուի ամէն ապահովութիւն կը վայելին: Այդ բարեբաստիկ վիճակը բնապետական լուծին տակ ալ կարելի է ձեռք բերել. այդ երեք բարիքները ապահովեան Բողոնիացիներուն համար: Պոլսոյ, Իզմիրի եւ ուրիշ քանի մը քաղաքներու Հայոց զեռ քանի մը տարի առաջ նիւթական կեանքի մասին ո՛ր եւ է բացառիկ գանդատի լուրջ պատճառ մը կը պակսէր: Բայց հայ ժողովուրդը «կե՛ր ա՛րբ եւ ուրախ լեր» անանական երջանկութեամբ չի կրնար երեք բաւականանալ:

Հայ ժողովուրդը առանց մտաւորական կեանքի չի կրնար ապրիլ. ամբողջ իր պատմութիւնը այս ճշմարտու-

Թեան կը վկայէ: Կանգ առնելով Տրդ դարուն առջեւ, անկէ մինչեւ մեր օրերը հայ ազգը թէ՛ իր երկրին մէջ, թէ՛ տարագրութեան մէջ միշտ կարգացեր, խորհեր, զոքր, վիճեր, յուզուեր է: Ըսուած է թէ երբ երկու հայ տեղ մը գտնուին անմիջապէս եկեղեցի մը կը շինեն, ընկերութիւն մը կը հաստատեն եւ տպարան մը կը բանան: Հայը բանտին մէջ ալ թերթ կը հրատարակէ: Եւրոպական թիւրքիոյ քաղաք մը բանտարկեալ ասիացի Հայերը, մինչ իրենց յեղափոխականի գատաստանը կը տեսնուէր, իրենց ալ ձեռագիր «Ձընտան»ը կը հրատարակէին: Տպագրութեան բարգաւաճումէն ի վեր Հայերը աշխարհիս ամէն կողմը՝ Հնդկաստան, Հոլանտա, Վենետիկ, Վիեննա, Ֆրանսա, Անգլիա, Պարսկաստան, Ռուսիա, Ամերիկա, Թիւրքիա, ամէն տեղ տարուան ամէն եղանակին մէջ միշտ կը գրեն կը տպագրեն: Ո՛րքան ընկերութիւններ, ո՛րքան գրքեր, ո՛րքան մատենադարաններ ո՛րքան թերթեր, եւ ինչ միլիոններ ծախսուած է ու կը ծախսուի:

Հայերը այսօր թիւրքիոյ մէջ գերազանցապէս մտաւորական ժողովուրդն են, եւ ցոյց կուտան թէ երկրի մը վարչութիւնը որքան որ ալ վատթար ըլլայ, երբ ժողովուրդը մը սուրբ հուրը իր հոգիին մէջ կը կրէ, չի զսպուիր, լոյսը միշտ կը փայլեցնէ. ու բռնապետութիւնը անկարող է զայն մարելու: Ո՛ր մեղի շրջապատող իսլամ ցեղերը, ո՛ր թիւրքերը, ո՛ր մենք: Իսլամները եթէ թիւին առաւելութիւնը ունին, մտքինը Հայոցն է:

Վերջին քսան տարիներու բռնապետութիւնը թիւրքերուն վրայ որքան աւելի ծանրացաւ անոնց միտքն ալ այնքան աւելի խոնարհեցաւ, իսկ հայկականն ալ այնքան աւելի ըմբոստացաւ: Պոլիս թերթերու բոլոր արտօնատէրերը եւ խմբագիրները, առանց ո՛ր է բացառութեան, աչքերնին յառեցին Եւրոպի շնորհաբաշխութեանց: Հայ մամուլը միայն, իր տկար անդամները ունենալով հանդերձ, իր ամբողջութեանը մէջ գերմարդկային ճիգերով ջանաց անսանձ բռնակալութեան առջեւ, սուրին և հուրին զէմ իր արժանապատուութիւնը կարելի եղածին չափ պահպանել: Գլուխը այնքան միայն խոնարհեցուց որքան կը պարտաւորէին լախտի ծանր հարուածները: Ու զոհ տուաւ Հայրենիքը, որ իր հինգ տարուան մաքառումին մէջ ինչքան ժամանակ հրատարակուեցաւ, գրեթէ այնքան ատեն ալ փակման գատապարտուեցաւ, առանց հաշուի առնելու ազդարարութիւնները, եւ ուրիշ ամէն տեսակ տառապանքները: Արեւելք տարի մը փակուած մնաց, արժանալայել ուղղութեան մը հետեւած ըլլալուն համար: Թիւրք մամուլը ո՛չ միայն զոհ մը չտուաւ, այլ հարստութիւն, փարթամութիւն զիզեց: Թիւրքիոյ հայ պրահեաններուն մէկ մասը, իր գաղափարներուն պատճառաւ այլ եւս երկրին մէջ ապրելու անկարող, ինկաւ Եւրոպա, Ափրիկէ, Ամերիկա ուր կը խորհին, կը գրեն ամէն զիւրութենէ զըրկուած, ամէն տեսակ նեղութեան ենթարկուած, փնտռելով իրենց գոհացումը պարտքի մը կատարման, գաղափարի մը սպասարկութեան մէջ: Թիւրքիոյ բազմամիլիոն իսլամ ժողովուրդներէն, մեր գիտցածը միայն մէկ անձ է որ

փառք, պաշտօն, զրամ արհամարհելով Եւրոպա տարազիր կ'աշխատի դատի մը համար:

Նախնական ու երկրորդ աստիճանի կրթութիւնը յետին տարիէ ի վեր թիւրքիոյ Հայոց մէջ տարածուելով կարգաւ-գրել գիտցողներու, քիչ կամ շատ զարգացեալներու ստուար թիւ մը ստեղծուած է, ու անոնք ամենքն ալ կարողու տենչ ունին: Աշխարհաբար գրականութիւնը հետզհետէ աւելի հրապուրիչ ընծայուած է, ընթերցանութիւնը եւ գրքի ու օրագրի պէտքը շատ զգալի եղած է. եւ ահա Պոլիս հայերէն չորս օրաթերթ կը հրատարակուի ու խել մըն ալ շաբաթաթերթ: Բայց ո՛չ թերթերը, ո՛չ հանդէսները, հակառակ իրենց բոլոր ըզձանքին և ջանքերուն, կը գոհացնեն հայ ժողովուրդը: Հայ ազգը արդի հրատարակութեանց մէջ ի գուր կը փնտռէ իր կարօտցած իտէալը. տխմար ու ապուշ գրաքննութիւն մը հոգին կը մեղցնէ:

Գեղեցիկ, լուրջ, ազդին հոգեկան եւ մտաւորական գէտքերուն համապատասխանող գրականութիւն մը չի կրնար գոյութիւն ունենալ մինչեւ որ ան իր մէջը չցուցնէ ազգային կեանքը. այդ ցոլացումն է զոր իշխանութիւնը կը խաւարեցնէ, եւ անոր հետ կը սպաննէ մտաւորական կեանքը: Պատմական ո՛ր է ակնարկութիւն ներելի չէ. Հայաստան անունին արտասանութիւնը ոճիւր մըն է. արդիւում է իմաստասիրական, ընկերական խնդիրն. բուն ուսումնասիրութիւնը: Հայ ժողովուրդին միտքն ու սիրտը սովատանջ կը տառապին:

Պատրիարքական պահանջումները մեղի անձանօթ կը մնան, ըսիրք. թո՛ղ ըլլան ինչ որ են. ճշմարտութիւնը այն է թէ ո՛ր է մասնակի գոհացումի ծրագիր վիթխարի խաբբայութիւն պիտի համարուի: Որքան ատեն որ Հայաստան անունին արտասանութիւնը արգիլուի, որքան ատեն որ Հայոց պատմութեան յիշատակութիւնը ոճրագործութիւն համարուի, որքան ատեն որ հայ միտքը հիւծելու, մեղցնելու ջանքերը երեւան գան, թիւրք իշխանութիւնը եթէ մինչեւ իսկ նիւթական մեծամեծ գոհացումներ տայ պատրիարքարանին, բայց եւ այնպէս հայ ազգը բռնաշինջ ընելու ծրագիրը Դրան յարատեւող քաղաքականութեան առաջնորդը պէտք է համարուի. ժողովուրդը մը կը մեռնի՝ երբ ազգայնութեան հոգին կը մահանայ. եւ այդ մահացումն է թիւրքիոյ կէտ նպատակին:

Հայկական ո՛ր է հրատարակութեան համար՝ հատոր, հանդէս, հանապազօրեայ թերթ, նախարգել գրաքննութեան ջնջումը և տեղը ազատական ոգւով օրէնքի մը հաստատութիւնը պատրիարքարանի կողմէն ներկայացուած պահանջումներուն մէջ առաջնակարգ տեղը զըրաւելու է: Եթէ պատրիարքը մոռնայ ազդին այս կենսական պէտքը, կրնայ ապահով ըլլալ որ ուրիշ ինչ գոհացում ալ ստանայ բայց և այնպէս տղզին անհոն գոգոհութիւնը երբեք պիտի չնուազի:

ԵՐԿՈՒ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԸ

Ա

Ազգ մեր կրնայ շատ բան կորսնցնել, շատ աղէտքներ կրել, ոչ նորեկ ոտքի ելլել: Երբոր հոգին կորսնցնե, աև աւեճն է որ աճեճ բան կորսնցուցած է եւ ա՛յ ոտքի չ՛ելլեր:

Հոկտեմբերի Բագնավեպը իր «Հանդէս Հանդիսից» բաժնին մէջ Թիֆլիսի թերթերէն քաղուածքի մը առթիւ կը պարտաէ կովկասեան տեսակ մը մամուլին հակազգային ջանքը հայ անուան իրաւունքէն ժառանգազուրկ ընելու համար լուսաւորչական եկեղեցիին չպատկանող Հայերը: Միեւնոյն միջոցին Կ. Պոլսոյ Արեւելք օրաթերթն ալ սեպտեմբեր 11 23ին հրատարակեց Բագուէն նամակ մը որով թղթակիցը կը յիշեցնէ Կարա-Մուրզային քանի մը տարի առաջ Էջմիածնի ճեմարանէն ճամբուելուն պատճառը: Համբաւաւոր երաժշտապետը կաթողիկէ է, ուստի սըրբապաղծութիւն համարուած է երգեցողութեան դասերը սըրբավայրի մը մէջ կաթողիկի յանձնել: Թղթակիցը կ'իմացընէ նաեւ թէ իրենց մամուլին «մի յայտնի մասը» կ'ատէ Կարա-Մուրզան. «եւ այդ ատելութիւնը, կ'ըսէ, նրա համար, որ նա ակամայից աշխարհ է եկել կաթողիկ ծրնողներէց, եւ դժբաղդութիւն է ունեցել Երեմիա եւ Արիստակէս եպիսկոպոսներէ բարեկամութիւնը վայելելու:»

Անշուշտ դիտուած է թէ լուսաւորչական Հայերը կը դայրանան երբ կաթողիկ Հայերէ ոմանք, ընդհանրապէս գեղացի ուսմիկներ, կը յայտարարեն թէ իրենք հայ չեն այլ ֆրէնկ: Նմանապէս դիտուած է թէ միշտ ծաղրուծանակ եղեր են այն կաթողիկ Հայերը որոնք անուսի եւրոպականացածք, Յակոբը՝ Ժապի, Օհաննէսը՝ Ժանի վերածելով կը կարծեն հայութեան ո՛ր եւ է նշան չպահել վրանին: Կաթողիկ Հայոց թշնամացող լուսաւորչական Հայերու իրենց ատելութեան զգացումին շարժառիթը հարցուած ատեն շատ անգամ պատասխան կը ստացուի թէ՛ «Անոնք ազգութիւննին կ'ուրանան, մենք ալ զանոնք չենք սիրեր. կաթողիկ բլլալով միթէ հայ չե՛ն:» Ու երբ Հայ կաթողիկները իրենց ազգայնութեան կը փարին, նոյն լուսաւորչական Հայերը միեւնոյն զայրոյթով կը յայտարարեն թէ «Լուսաւորչի աթոռին իրաւասութեանը չեն թարկուողը Հայ անուան իրաւունքէն զրկուած է:» Այդ դիտողութիւնը ուշադրութեան յանձնարարելով կ'անցնիմ ընդհանուր տեղութեան մը:

* *

Կովկաս կաթողիկ եւ աւետարանական Հայոց հայ ազգայնութեան իրաւունքին դատը 1872ին Գրիգոր Արծրունին սկսաւ պաշտպանել Մշակի հիմնադրութեամբ: Քառորդ զար մը առաջ կովկասի Հայոց մտաւորական զարգացումին մակարդակը մերինէն ստոր ենթադրել նեւրելի է. վասն զի Գրիգոր Արծրունին ո՛չ միայն յառաջդիմական մը, այլ նաեւ յանդուգն յառաջդիմական մը նկատուեցաւ երբ խղճի ազատութիւնը եւ ցեղային արեւնակցութիւնը համերաշխելու սկզբունքը քարոզեց. արդ՛ այդ գաղափարը 1872ին շատոնց ի վեր էր որ Թիւրքիոյ Հայոց մտքին մէջ եթէ ոչ կատարելապէս յաղթանակած գոնէ լայնածաւալ առպարէզ մը կտրած էր, իրեն սպասարկուներուն վրայ առանց մասնաւոր ուշադրութիւն հրաւիրած բլլալու:

Բայց Մշակ պոլսեցի մտածողները հեռուն թողուց երբ իսլամացած Հայերն ալ Հայ ազգայնութեան շրջաբոլորին մէջ առնել ուզեց: Արծրունիին ընկերաբանական իմաստասիրութիւնը ոչ միայն իր հակառակորդներուն զայրոյթը զրգոնց այլ և բարեկամներէն շատերն ալ խըրտչեցուց: Բայց 1896ին Էջմիածնի պաշտօնաթերթ Արաւրատը հայ ցեղին պատկանողներուն թուահամարը ըրած ատեն ցուցակին մէջ իսլամ Հայերն ալ անցընելով գործնականապէս վաւերացուց Մշակին վարդապետութիւնը: Իսլամներուն հայութեան խնդիրը Թիւրքիոյ մէջ չէր կրնար յուզուիլ. պետական կրօնքին պատկանող բոլոր այլազան ցեղերը պաշտօնապէս մէկ ազգայնութիւն կազմած կը համարուին. տարբեր նկատողութիւնը քաղաքական յանցանք է: Նմանապէս եւ Ռուսիոյ մէջ ալ օրթոտոքսութիւն ընդունող Հայերը ուս կը նկատուին ըստ օրինի, ուստի եւ չեն կրնար ազատական հայ մամուլին մէջ հայ հոշակուիլ:

Բայց եթէ իսլամութիւն ընդունող Հայոց վրայ Պոլիս, եւ օրթոտոքսութեան յարած Հայոց վրայ Թիֆլիս ազատօրէն զրել ներուած բլլար, չեմ կարծեր թէ կարելի բլլար գործնականին մէջ հաստատել օրթոտոքս եւ իսլամ Հայոց հայութիւնը: Յեղը և ազգայնութիւնը իրարու հետ երբ շփոթենք, կը սխալինք: Իսլամ եւ օրթոտոքս Հայերը ցեղով այնքան հայ են որքան լուսաւորչական կամ կաթողիկ Հայը. բայց ազգայնութեամբ Հայ չեն: Միեւնոյն ցեղին պատկանող անհատները կրնան տարբեր ազգայնութեանց անդամակցիլ. դանազան ցեղերու պատկանողներ կրնան մէկ ազգայնութիւն կազմել, ինչպէս ժամանակակից Ամերիկան: Տեսակ տեսակ պայմաններ կան որոնց միացումովը խուճը մը մարդիկ քաղաքական կամ բարոյական ազգայնութիւն կը կազմեն: Այդ պայմանները միեւնոյնը չեն միշտ եւ ամէն տեղ. բայց ընդհանուր կերպով մը՝ շահերու, մտածութեան եւ հաւատքի համանմանութիւնը ազգայնութեան կապը կը յօրինեն: Իսլամ կամ օրթոտոքս Հայը ո՛չ իր շահերովը, ո՛չ իր մտածութիւններովը, ո՛չ իր հաւատքովը ո՛ր եւ է յարաբերութիւն ունի հայ ազգայնութեան հետ, ուստի ո՛չ հայ կը նկատէ ինքզինքը, և ոչ ալ Հայերը զինքը հայ կը համարին: Անհատը

կը պատկանի հայ ցեղին, որուն յատկանիչերը միշտ իր վրայ կը կրէ, բայց անշատուած է հայ ազգայնութենէն: Այս ճշմարտութիւնը բոլոր ազգերուն համար է: Ամբրիկա զաղթող գերմանացին, ֆրանսացին, իտալացին կը դարձնեն իրենց բնական ազգայնութեան պատկանելի: Իսկ օտար ցեղերէ աշխարհակալուած երկիրներու բնիկները իրենց յատուկ ազգայնութիւնը կը պահպանեն կամ կը կորսնցնեն զանազան պայմաններու համեմատ, որոնց զուտն է կրօնը: Եթէ առաւելապարտութիւնը կրօնքով կաթոլիկ եղած ըլլար, օրթոտոքսութիւն ընդունող Հայերը միշտ հայ պիտի մնային՝ ինչպէս հիմակ Ռուսիոյ հայ կաթոլիկները. իսկ կաթոլիկութիւն ընդունողները պիտի ուսումնային, ինչպէս հիմակուան ուսացած Հայերը:

Մեր արդի քաղաքական կացութեան մէջ իսկամ եւ օրթոտոքս Հայոց ազգայնութեան խնդիրը առ այժմ մեր մտքերը օգտակարապէս չի կրնար զբաղեցնել: Թրքահայ յաստանի վիճակին հիմնական բարեփոխութեան մը պարագային հաւանօրէն տարբեր կերպով խորհելու մղուինք իսլամացած Հայերու մասին: Հիմակու հիմա Թիւրքիոյ մէջ կրօնական մեծամասնութիւնները եւ փոքրամասնութիւնները հաշուի կ'առնուին և ոչ թէ ցեղակիցները. ուստի երեք դաւանանքի պատկանող քրիստոնէսայ Հայոց ազգայնութեան խնդիրը միայն նկատողութեան առնելու ենք:



Արեւելքի հրատարակութիւններէն կը տեսնուի թէ կողմիս լուսաւորչական Հայեր երբ իրենց հակառակորդներուն վրասել ուզեն կարող կ'ըլլան ուրիշ Հայոց կրօնական դաւանանքը զէնք ընել: Միեւնոյն երեւոյթը Պոլիս ալ կը տեսնուի: Մասիսի մէջ վերջերս կարգացի թէ Բիւզանդիոն թերթը մրցակից Առաքանդակը ժողովրդին աչքէն ձգելու համար կը ջանայ օգտուիլ անոր արտօնատիրոջ կաթոլիկ դաւանանքէն: Այս երկու օրինակները կը բաւեն տեսնելու համար որ խմբագիրները իրենց անձնական շահերուն կը ծառայեցնեն զուտ կրօնական խնդիրները. բայց որովհետեւ խմբագիրները ժողովուրդը քիչ շատ կը ճանչնան, եւ իրենց անձնական շահերուն պաշտպանութեանը մէջ սխալ գործելէ կը զգուշանան, ուստի կրնանք առանց սխալելու ընդունիլ թէ՛ ժողովրդին զօնէ մէկ մասին մէջ կաթոլիկներու կամ աւետարանականներու դէմ ատելութիւն կայ, եւ խմբագիրները ուրիշ բան չեն ըներ բայց եթէ չարաչար գործածել ժողովրդին այս զգացումը: Ատենօք Պոլիս բարի քրիստոնէսայ չէր սեպուեր, ուստի եւ ոչ ալ բարի հայ՝ պահէր ուսողը: Եթէ մինչեւ հիմակ Պոլսեցիները կրօնական այդ աւանդութեան հաւատարիմ մնացած ըլլային, Բիւզանդիոն փոխանակ կաթոլիկութեան ամբաստանութեամբ թերթ մը չախլախել ջանալու, զայն հարուածել պիտի խորհէր «Անոր արտօնատիրը պահէ չի բռներ» դոչելով:

Այս ինչ լրացրին, այն ինչ անձին ըսածները կարեւ

որութիւն կը ստանան անոր համար միայն որ լուսաւորչական Հայոց աւելի կամ նուազ ստուար թիւի մը հոգեկան տրամադրութեանը և մտաւորական վիճակին ճիշդ ու ճիշդ կը համապատասխանեն: Ոչ-լուսաւորչապաշտաններու հայ ազգայնութիւնը ուրացողները զիտեն թէ իրենց զբոյժն ելած ամէն մէկ տող, իրենց բերնէն թռած ամէն մէկ բառ պիտի երթան բռնկցնեն ատելութեան վառելանիւթերը որոնք սրտերու մէկ խորշիկը, ուղեղներու մէկ բճիճը գետեղուած կը մնան. իսկ երբ կը տեսնենք որ թէ՛ Պոլիս եւ թէ՛ Թիֆլիս ուրիշ թերթեր, ուրիշ խորհողներ ազգութեան զաղափարը չեն ստորագրած կրօնական ո՛ր եւ է դաւանանքի, կրնանք ընդունիլ թէ անոնց ալ ձայնը լուսաւորչական Հայոց մէկ մասին սրտին արձագանգն է, մտքին ցողացումը: Ու երբ լուսաւորչական, կաթոլիկ, աւետարանական Հայեր ազգային յառաջդիմութեան եւ զարգացման զանազան գործերու մէջ միասին կ'աշխատին, գործնականապէս կը հաստատեն եւ կ'ամրապնդեն խղճի ազատութեան եւ արեւակցական ազգայնութեան սկզբունքը: Այս երկու բաժանումէն կրնանք հետեւցնել թէ լուսաւորչականներու կողմէ իրենց ոչ-դաւանակից ազգակիցներու նկատմամբ թէ՛ ատելութիւնը թէ՛ սէրը հաւաստարապէս ազգային կեանքի երեւոյթներ են որոնք մեզի ո՛չ կրնան զայրացնել ո՛չ ալ հրճուեցնել, եթէ ընկերաբանական ուսումնասիրութեան սահմաններուն մէջ մնանք: Առանց կրքի կարող ենք ուսումնասիրել այդ երեւոյթներուն պատճառները եւ նախատեսել թէ՛ ո՞ր զաղափարը հաւանօրէն պիտի կրնայ ստուար մեծամասնութեան մը մտքին վրայ տիրապետել:



Կաթոլիկ եւ աւետարանական Հայերը ատող լուսաւորչականները չենք կրնար ընդհանուր առմամբ մը իբր ազգատեաց, իրենց ազգային շահերուն դաւաճան, ու շահամոլներ հռչակել եւ ոչ ալ տկարամիտներ: Այսպիսի յայտարարութիւն մը զիտական հիմ չունի, և ոչ ալ փորձառութեան վրայ հաստատուած է: Ղազէզ Արթին ամիրան կաթոլիկ Հայոց դէմ հալածանք հրատարակեց եւ սուլթան Մահմուտի քով ունեցած իր մեծ ազգեցոյթեամբ զայն գործադրեց: Մեր պատմութեան մէջ անմասն զէպք մը: Բայց Ղազէզ Արթին մինչեւ հիմակ կը մնայ եւ միշտ ալ պիտի մնայ ամենամեծ ազգատէրի մը տիպարը: Մատթէոս պատրիարք բանադրեց աւետարանական Հայերը, որոնք Նոր-Աղանդ կը կոչուէին, ինչպէս հիմակ ալ Բողոքական: Ու եթէ չկրցաւ զանոնք աքսորել կամ ջրնջել, պատճառը այն է որ ժամանակին քաղաքականութիւնը այլ եւս չէր թոյլատրեր Ղազէզի օրուան բռնապետութիւնը: Մատթէոս պատրիարք ջերմ ազգատէր մըն էր, սրբակեաց ու բարի եկեղեցական մը, տաղանջաւոր գրող մը, և կաթոլիկոս ընտրուեցաւ. իր նշանաբանն էր «Ազգ իմ, աչք իմ»: Մեր ժամանակները բժիշկ Յովսէփ Շիշմանեան, զրականութեան մէջ Մերենց, յայտարարեց եւ

հրատարակեց թէ ով որ լուսաւորչական եկեղեցիին չի պատկանիր՝ ան հայ չէ. «Արտաքոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ չիք հայութիւն»։ Երբնց երոպական կրթութեամբ օժտեալ, լուսամիտ հայ մըն էր. իբր բժիշկ կրնար մինչեւ աստիճան մը գիտուն համարուիլ. պատմագէտի համբաւով տաղանդաւոր հրապարակագիր մը եղաւ. մեր պատմական կեանքէն իր վէպերը տաք ու փափկասիրտ հայրենասէրի մը հոգին կը ցոլացնեն, եւ միշտ ջերմ ազգասէր մը համարուեցաւ, շատ իրաւամբ։ Ու նաեւ կաթովիկ էր, մահէն տասը տարի առաջ միայն յարեցաւ լուսաւորչական Եկեղեցիին։ Իր ազգայնութեան եւ կրօնքի դաւանանքը խորին համոզումի մը արտայայտութիւնն է։

Այսպէս ահա կէս դարու ժամանակամիջոցի մը մէջ երեք տարբեր տիպարներ, երեքն ալ ամենամեծ ազգասէրներ, կը մարմնացնեն հայ եկեղեցին եւ հայ ազգին անբաժանելի միանձնաւորութեան գաղափարը։ Ու այդ գաղափարը մինչեւ հիմակ ալ կ'ապրի, եւ դեռ շատ երկար ատեն ալ պիտի ապրի։ Այդ երեք ազգասէրներն ալ այդ գաղափարը տկարացնող ուրիշ ո՛ր եւ է գաղափար սպաննելու համար առանց խղճահարութեան գործածեցին այն զէնքերը զոր իրենց տրամադրութեան տակ կը գնէր իրենց ժամանակը. Ղազէզ՝ Հալածանքը, Մատթէոս պատրիարք՝ Բանադրանքը, Շիշմանեան՝ Մամուլը։ Հիմակ այդ գաղափարին ծառայողներուն պիտաւոր զէնքը կը մնայ մամուլը, եւ այն բոլոր մեծ ու պզտիկ հալածանքները, այն բոլոր քաղաքական ու մտաւորական բանադրանքները որոնց կրնան դիմել առանց ո՛ր եւ է մեծ անպատեհութեան։ Միայն թէ չենք կրնար ամէնուն համար ըսել թէ ազգային պահպանութեան համոզումն է որ զիրենց հալածիչի պաշտօնին կը մղէ։ Բայց այս նկատուութեան վրայ կանգ չենք առներ։

Անոնք որ Հայ ազգութիւնը եւ հայ եկեղեցին անբաժանելի միաւորութիւն կը հռչակեն, անոնք՝ ժողովուրդ ըլլան թէ ժողովրդի առաջնորդողներ, հին ժամանակներէն մինչեւ մեր օրերը, կա՛մ բնագոյով ղապցեր են, կա՛մ ուսումնասիրութեամբ համոզուեր են որ երբ Հայոց ազգը քաղաքական ստրկութեան մէջ է, Հայերը իրենց ազգայնութիւնը պահպանելու, զօրացնելու եւ ապահովելու ապագային սպասելու համար ինչչափ կարելի է միութեան բազմաթիւ կապերով իրարու պրկուելու են։ Արդարեւ ազգային ընդհանուր ձգտումն է զգացումներու, գաղափարներու համանմանութիւնը պահպանել, աճեցնել, զօրացնել Հայոց մէջ։ Կեդրոնի մը շուրջը Հայութիւնը համախմբելու պէտքը հետզհետէ աւելի ղալի կ'ըլլայ։ Անոնք որ Հայաստանեայց Եկեղեցիէն դուրս հայութիւն չի կայ կը յայտարարեն, այդ եկեղեցին արգէն կազմ է պատրաստ կեդրոնը կը համարին, վասն զի անիկայ հայ ազգը իր շուրջը բոլորելու ամէն առաւելութիւնները կը վայելէ։ Դարերը որ պատմական եւ հողային հայրենիք մը ստեղծած են Հայոց, ստեղծած են նաեւ պատմական եւ բարոյական հայրենիք մը որ Հայաստանեայց Եկեղեցի կը կոչուի։ Երկու հայրենիքները իրար կ'ամբողջացնեն։

Հայը իր տարագրութեան մէջ միշտ հետը կը տանի բարոյական հայրենիքը որ միւս հայրենիքը միշտ կը յիշեցնէ։ Այդ եկեղեցին իրեն կը քաշէ Հայոց հոգիները, սրտերը, մտքերը։ Ամբողջ ազգային պատմութեան յիշատակարանն է։ Ամէն մէկ աղօթք, ամէն մէկ մեղեդի տաանեհինգ դար կը կենդանացնէ։ Միեւնոյն ուրախութիւններով հրճուած, միեւնոյն տառապանքներով շարշարուած ըլլալու յիշատակը որ ազգայնութեան մը էութիւնն է, անմահ կենդանութեամբ հայ եկեղեցիին մէջ կ'ապրի։ Ի՛նչ տարբեր տարբեր կլիմաներու ներքեւ ալ գտնուին Հայերը, հոգեկան ի՛նչ այլազան զգացումներով ալ հրճուին կամ տառապին, միշտ իրարու հետ սրտով կը հաղորդակցին Եկեղեցիին անտեսանելի զօրութեամբը։ Ուսմըր, Բարեզ, Վան, Մերվ, Ատանա, Թիֆլիս, Պոլիս, միեւնոյն օրերը, միեւնոյն ժամերուն, միեւնոյն հոգեկան թռիչք ամէն հայ սրտէ կը սլանայ։ Նոյնը սլացած էր 500ին, 1000ին, 1500ին, 1800ին, եւ 1900 ին նոյնը պիտի ըլլայ։ Ժամանակն ու անջրպետը կը կորսուի Հայաստանեայց Եկեղեցիին մէջ. տասնհինգ դարերու հայութիւնն է որ կ'ապրի այդ եկեղեցիին մէջ. նախահայրերը իրենց թոռներուն հետ են, Հայաստանցիները տարագիրներուն հետ։

Ու երբ եկեղեցին է հայրենիքը, ազգութիւնը, առանց դժուարութեան կ'ընդունուի թէ ով որ կը բաժնուի այդ եկեղեցիէն՝ կը բաժնուի նաև հայրենիքէն, իր ազգութենէն։ Ու հալածանքները, նիւթական ըլլան թէ բարոյական, նպատակ ունին ազգային ամբողջութիւնը պահպանելու։ Եւ որովհետեւ ազգայնութեան մը պահպանութեանը համար նուազ խղճահար բարոյականութեան մը պէտքը զգալի եղած է ամէն ժողովրդի մէջ, ուստի Ղազէզ մը, Մատթէոս պատրիարք մը, Երբնց մը իրենց ազգակիցներուն համար մարմնական, հոգեկան կամ մտաւորական պատուհաններ կը անօրինեն, առանց հանրային զգացումը զիրենք դատապարտելու։ «Նպատակին սրբութիւնը կ'արդարացնէ միջոցին անսրբութիւնը»։ Եւ ի՛նչ նպատակ աւելի սուրբ, ժողովուրդներուն համար, քան ազգութեան մը պահպանումը, մանաւանդ երբ ազգութիւնը կրօնքին հետ ի մի խառնուած է։

Եթէ յառաջիկային լուսաւորչականները, ու կաթովիկ եւ աւետարանական Հայերը կը մեղադրեն պահպանողական լուսաւորչականները հայ ազգայնութեան մասին անոնց այս ըմբռնումներուն եւ զգացումներուն համար, պէտք է նաեւ ընդունին որ Հայոց այս դժբաղդ վիճակին մէջ տարօրինակ պէտք չէ թուի տեսնել մաս մը Հայեր, նոյն իսկ եթէ մեծամասնութիւն կազմեն, որոնք Երոպացիներէ աւելի ազատամիտ չեն գտնուիր։ Անկախ, ազատ, աշխարհական հայրենիք ունեցող Երոպացիներէ շատերը իրենց ազգութիւնը և հայրենիքը կրօնքի մը հետ ի մի կը ձուլեն, եւ այդ կրօնքէն դուրս գտնուողներուն վրայ խոստ աչքով կը նային։

Յորանսան որ իր մեծ Յեղափոխութեամբը մարդկային իրաւունքները հռչակեց, այսօր, գործնական կեանքի մէջ, կրօնքի գերիշխան ազդեցութեանը ներքև է։ Ամէն օր խոր-

հրդարանին մէջ, հանրային կեանքի զանազան պարագաներուն մէջ, նա մանաւանդ օրագրութեան մէջ, կրօնական հակամիտութիւնները, տեսութիւնները, վէճերը ամենամեծ դեր կը կատարեն, ինչ որ ցոյց կուտայ թէ 38 միլիոնէ բաղկացած անկախ մեծ ազգ մը կրօնքի գործնականապէս կարեւորութիւն կ'ընծայէ: Ո՛չ ոք չէզոք է կրօնական խնդիրներու մէջ: Ազատախոհները՝ իրենց բոլոր ստորաբաժանումներովը, ոխերիմ թշնամիներ են ընդհանրապէս քրիստոնէութեան, բայց յատկապէս կաթողիկոսութեան, զոր Ֆրանսայի համար մահաբեր համարելով կը ջանան շլատել, տկարացնել, չէզոքացնել: Կաթողիկոսները, որ Ֆրանսայի ամենաստուար մեծամասնութիւնը կը կազմեն, շատ հաշտ աչքով չեն դիտեր ուրիշ դաւանանքի պատկանող Ֆրանսացիները: Տրէֆիսի խնդիրը կրօնական գոյն առաւ. կաթողիկոս ֆրանսացիները մէկ կողմ անցան, և բողոքական ֆրանսացիները՝ իրենց հետ ունենալով Հրեաները, ֆրանս-մասոնները եւ ազատախոհներու մեծ մասը յարեցան միւս կողմին: Սակաւաթիւ չեն կաթողիկոս ֆրանսացիներ որոնք ֆրանսացի չեն համարիր բողոքական ֆրանսացիները: Այս տարօրինակ համոզումը շատ լուրջ պարբերականներու մէջ կ'երեւի, շատ տաղանդաւոր ֆրանսացիներէ կը լսուի: Ականաւոր անձնաւորութիւն մը, Պ. Պրիւնթիէր, համբաւաւոր գրագէտ, առաջնակարգ քննադատ, Ակադեմիոյ անդամ, ու Ֆրանսայի էն կարեւոր հանդէսին՝ Ռեվիւռ տե Տեօ Մոնտի անօրէն, քանի մը ամիս առաջ հրատարակային ճառի մը մէջ յայտարարեց թէ « Ոչ ոք կրնայ միեւնոյն ատեն թէ՛ կռապաշտ եւ թէ՛ քրիստոնէայ ըլլալ, ըսել կ'ուզեմ՝ թէ՛ ֆրանսացի ըլլալ եւ թէ՛ հակակաթողիկոս: » Կարծիք մը որուն արժէքը քննել մեզի չիոնար, բայց շատ տարօրինակ կրնայ երեւնալ: Երբ ֆրանսացիները այնքան սերտ առնչութիւն մը կը դնեն ազգային կրօնքին եւ ֆրանսական ազգայնութեան միջեւ, Հայոց ալ անշուշտ ներքի է նմանօրինակ գաղափարներ տածել:

Երկար կ'ըլլայ ուրիշ աղգերէ ալ օրինակներ առաջ բերել: Միայն թէ գիտենք որ իրենց ազգային ազատութիւնը կտրանցնող ժողովուրդները ազգային կրօնքի մէջ կը փնտռեն իրենց ինքնապահպանութեան ապահովութիւններէն մէկը, եւ թերեւս դիտարկը:

Այն մեծ կարեւորութիւնը զոր Եւրոպայի մէջ թէ՛ ազատ ազգերը, թէ՛ բռնապետականները, թէ՛ իրենց ակախութիւնը կորսնցնող ժողովուրդները ազգային կրօնքին կ'ընծայեն, կրնայ բաւական բացատրել լուսաւորչական Հայոց պահպանողականներուն զգացումները եւ գաղափարները:

* * *

Այդ պահպանողականները սակայն լուսաւորչական Հայոց ստուար մեծամասնութիւնը չեն կազմեր, մինչեւ իսկ եթէ ընդունինք թէ յառաջդիմականներուն հետ ազգը կէտցակէս կը բաժնեն: Իրենց համոզումները սրեմն ազ-

գին ընդհանրութեան համոզումները չեն: Կը տեսնենք թէ առաջնակարգ զարգացած Հայեր խզծի ազատութիւնը եւ հայ ազգայնութիւնը իրարու հետ հաշտ պահելու սկզբունքը դաւանած ու պաշտպանած են: Այդ նշանաւոր անուններէն երեքը միայն յիշեցնենք. Օտեան, Ներսէս պատրիարք, Արծրունի: Առաջինը՝ Ղազէզ ամիրային կը համապատասխանէ. երկրորդը՝ Մատթէոս պատրիարքին. երրորդը՝ Ծերենցին: Երեքն ալ թէեւ տարբեր տարբեր յատկութիւններով օժտուած բայց մեծ տաղանդի և ջերմ ազգասէրի արժանաւոր համբաւը կը վայելեն: Ու երբ ջանացի համառօտաբար բացատրել պահպանողականներուն հոգեբանութիւնը եւ մտածութիւնը, հարկ է որ պարզեմ նաեւ յառաջդիմականներուն համոզումին շարժառիթները: Այս աշխատութիւնը երկրորդ յօդուածի մը նիւթ կ'ըլլայ:

ԱՐՓԻՍՐ ԱՐՓԻՍՐԵԱՆ

ՖՐԱՆՍԱ ԱՐԵՒԵԼԷՔԻ ՄԷՋ

F

Պալքանեան պետութիւններուն միջև միութիւնը գոյացած կը թուէր 1897 ապրիլին: Սուլթանին ծայրայեղ արարքները փութացուցած էին զայն: Թիւրքեհեզելենական պատերազմին նախընթաց օրերը, Պուլկարները, Սերպերը եւ Մոնթենեկրոցիները շարժման մէջ կը դնէին իրենց բանակները՝ օգնելու համար Յունաստանի: Կ. Պոլսոյ եւ Աթէնքի մէջտեղ, չորս հարիւր հազար զօրք պատրաստ էին Թիւրքիոյ դէմ ելլելու. ասոր հետեւանքը պիտի ըլլար՝ Թիւրքիոյ համար՝ հաղորդակցութեանց անապահովութիւն, ապստամբութիւն՝ պատերազմին խառնուած, ամենուն հասնելու և ամենուն դէմ գնելու անկարելիութիւն, Եւրոպայէն վտարուելու հաւանականութիւն:

Վտանգը նոյնքան մեծ էր Աւստրիոյ համար: Աւստրիոյ համբերութիւնը իր յոյսը դրած է սա բանին վրայ որ բնիկ տարրերը չուժովնան և իսլամը տկարանայ: Եթէ բնիկ տարրերը, իրենց միութեամբը հզօր, յանկարծ մէջերնին բաժնէին այն աշխարհը զոր Աւստրիա դրաւի տակ առած էր, ա՛լ ամէն յոյս կը կոտորուէր: Եթէ Աւստրիա այդ բնիկ ցեղեղներուն ձգէր իրենց աշխարհակալած երկիրները, իր ապագան կը քանդէր, կը կորսնցնէր այն միակ երկիրները որոնց վրայ տակաւին կը շողայ յոյսի մը նորածագ արեւը: Եթէ յաղթականներուն ձեռքէն խլելու ելլէր իրենց ստացուածքը, այն ատեն ինքն ալ պատերազմի կը բռնուէր, որուն մէջ իր ժողովուրդներէն շատը որտանց ա՛յն Սլաններուն հետ պիտի ըլլային որուն դէմ ինք կը մարտնչէր: Իր շահը կը պահանջէր որ Պալքաններու ժո-

դովորդներուն միջև համաձայնութիւն չգոյանայ. թէ կողիացեալ Յունաստանի վրայ թիւրքիոյ ստորգ յաղթուածութիւնը թեւակտուր ընէ քրիստոնեայ ցեղերուն փառասիրութիւնները, և Աւստրիոյ առջեւ ազատ ասպարէզ թողու տպագայ երկրակալութեանց համար. թէ աւստրիական դրամագլուխը եւ վաճառականութիւնը, որոնք արդէն կը տիրեն Սոֆիա և Պէլկրատ, իրենց յամր յառաջխաղացումը շարունակեն, խաղաղութեան շնորհիւ: Բայց ի՞նչպէս խաղաղութիւնը հարկադրել այդ ժողովուրդներուն զորոնք անձնապահպանութեան բնազդը դէպի պատերազմ կը մըղէր: Եւրոպայի մի՛ն պէտք էր ատոր համար: Աւստրիա յանուն երբեակ նիզակակցութեան կը խօսէր. կը մնար Ռուսիան, Ֆրանսան եւ Անգլիան: Ֆրանսա որոշած էր իր գաշնակցին հետեւիլ. Անգլիա, եթէ միայնակ մնար, անզօր կը դառնար. ամէն բան ուրեմն Ռուսիայէն կախում ունէր:

Ռուսիա, Պուլկարիոյ մէջ ունեցած ձախողումըքէն ի վեր, ալ ո՛ր եւ է մէկը պաշտպանելու գաղափարէն հիասթափուած կը թուէր, եւ պալքանեան զործերը հոգը չէր ընէր: Իր վայելած այնքան առաւելութեանց քով, Աւստրիոյ բազդատմամբ սա աննպաստ պարագային մէջ կը գտնուէր որ շատ մեծ շահեր ունէր ձեռքը որոնց ամէնուն մէկէն չէր կրնար հասնիլ, եւ հետեւաբար ստիպուած չէր յամառելու մնալու հոն ուր խոչընդոտներ գտնէր իր դէմը: Ռուսիա իր գործունէութիւնը Չինաստանի կողմը դարձուցած էր, եւ Եւրոպայի հարաւակողմը շատ փոքրիկ նահանգ մըն է անոր համար որ Ասիոյ վրայ կը տիրապետէ: Իր սլաւ յաճախորդներուն ասպարէզ իջնելը՝ իրեն շատ մը տաղտուկ պիտի պատճառէր, առանց ո եւ է շահու: Եթէ միայնակ պատերազմէին, ու յաղթէին, իրենց յաջողութեանը շնորհիւ Ռուսիոյ ձեռքէն պիտի ազատէին օձիքնին. եթէ յաղթուէին, երբեք Ռուսիոյ պիտի չնեղէին զիրենք երեսի վրայ թողած ըլլալը: Եթէ ստիպուէր գաննեց պաշտպանելու մեծ պետութեան մը միջամտութեանը դէմ, ատով հաւանած պիտի ըլլար անոնց ընդարձակմանը, որ աւելի պիտի դուռարացնէր իր գերակշռութեան զործադրութիւնը: Վերջապէս, այդ պատերազմը ո՛չ միայն իրեն ո եւ է օգուտ պիտի չբերէր Պալքաններուն մէջ, հապա կրնար վտանգել՝ եթէ ընդհանուր պատերազմի մը փոխուէր՝ Ռուսիոյ սկսած ձեռնարկները Չինաստանի մէջ: Անշուշտ, իրաց արդի կացութեան պահպանումը բուրովին նպաստաւոր էր Աւստրիոյ, եւ կը փութացնէր գերմանական արշաւանքը դէպի Սէլանիկ եւ Կ. Պոլիս: Բայց ի՞նչ փոյթ այդ զուր յառաջացումը՝ այն օրը որ անդրսիպերեան երկաթուղիին աւարտումը Ռուսիոյ կողմը պիտի դարձնէր Չինաստանի եւ Հնդկաստանի հին ճամբաները: Երբոր Ռուսիա իր ազգեցութեանը ենթարկէ Ասիոյ անհունութիւնները, իրեն կողմը վազցնել տայ վաճառականութեան մեծ աղբիւրները, եւ սլաւ ցեղին համար ձեռք բերէ ազգեցութիւն մը որուն օրինակը չկայ պատմութեան մէջ, ամէն մըցում անկարելի պիտի դառնայ, եւ Պալքաններուն սլանները իրենք իրենց արբան-

եակի տեղը պիտի բռնեն իր դրութեան մէջ: Իրեն համար, էականը ան էր որ ոչ մէկ բան եւ ոչ ոք ուշացնէր իր հեռաւոր յառաջխաղացութիւնը, որ իրեն համար յաղթական վերադարձ մը կը պատրաստէր: Ծայրագոյն—Արեւելքէն ուրիշ բան չէր փափաքէր զրկել իր Եւրոպայի յաճախորդներուն բայց եթէ ափիոն, քնացնելու համար անոնց ցանկութիւնները եւ ցաւերը: Աւստրիա ասոր ապացոյցը ունեցաւ երբոր՝ երկու կայսրերուն համաձայնութեամբը պալքանեան վեհապետներուն կարգադրութիւնները խորտակելու համար՝ Ֆրանց—Եոզէֆ այցելութեան գնաց Նիքոլա Բ ի. Այս տեսակցութեան վրայ, համանըման երկու հեռաղիւր Բեղրպուրկէն և Վիեննայէն ազդարարեցին պզտիկ ժողովուրդներուն որ Եւրոպա իրենց կը հըրամայէր իր հանգիստը չխոռովել:

Մնաց որ, մեծ առաւելութեանց փոխարէն, պզտիկ շահերու միտթարանքը ընծայեցին իրենց: Ռուսիա եւ Աւստրիա Սուլթանէն առեւտրական գաշնազիր մը ձեռք բերին Ռուսմանիոյ համար, եպիսկոպոսութիւններ եւ զբարոցներ՝ Սերպերուն եւ Պուլկարներուն համար այն նահանգներուն մէջ զոր այդ երկու ժողովուրդները իրարու ձեռքէ խլել կ'աշխատին: Ռուսիա, ինչպէս նաեւ Աւստրիա, կուտար այն շնորհները որոնք զժողովրդին առաջ կը բերին: Ու ամէն մարդ ակնբերե տեսաւ այդ քաղաքականութեան վերադարձը, որ պաշտպաններուն նպաստաւոր է քան պաշտպանեալներուն, այն օրէն ի վեր ուր Միլան թագաւորը իշխանութիւնը վերստին ձեռք առած է Պելկրատ, ու նորէն զժողովուրդը Սերպիան, Պուլկարիան եւ Մոնդէնէլքօն:

Այսօր, Պալքանեան թերակղզիին ժողովուրդները գտնու համոզումը ունին թէ առիթը փախցուցին անցեալին մէջ, վախը ունին թէ ապագային նորէն յուսախար պիտի ըլլան, կը տարակուսին թէ կրնան բան մը յուսալ Աւստրիայէն ունոյն իսկ Ռուսիայէն, այս միայնութեան անձկութիւնը ունին, եւ անկախութեան յամառ կամքը: Կը զգան թէ իրենց պէտք եղածն է և է վեհանձն ժողովուրդի մը բարեկամութիւնը: Այդ ժողովուրդը՝ կը փնտան, կ'անուանեն. Ֆրանսան է:

Ամէնէն առաջ, Ֆրանսան էր որ ձայն տուաւ իրենց. երբոր իրենց աղօտ դիտակցութիւնը կը տարակուսուր թէ վերստին ապրելու կամքերնին յիմար ընդվզում մը չէ՞ր աշխարհակալութեան իրաւունքին դէմ օր աշխարհի տիեզերական օրենքն է, Ֆրանսա, այդ օրէնքը ջնջելով, ցեղերուն իրաւունքը հոշակեց: Անոր ձայնէն էր որ իրենք, պարբէրէ ի վեր թաղուած Ղազարոսներ, ելան կանգնեցան իրենց գերեզմանին մէջ, եւ ա՛ն էր միայն որ անշահախնդրութեամբ աշխատեցաւ իրենց ազատութեանը: Ա՛լ իր մէջ չեն սպասեր զինու զօրութեան աջակցութիւնը զոր յաճախ շնորհեց ան. գիտեն թէ իր բազուկը ա՛լ ազատ չէ: Բայց դիւանագիտութիւնը գաղանիքը ունի հազար գարմաններու սրոնք, առանց բժիշկը վտանգելու, հիւանդներուն վիճակը կը բարւոքեն. այդ տառապող ժողովուրդները մեզի մեծապէս շնորհապարտ պիտի մնային այդ աջակցու-

Թեանը համար: Ասոր վրայ իսկ յոյս չեն դնել հիմակ, որովհետեւ գիտեն թէ անձեռնհաս և վաղանցուկ կուտակցութիւններու լուծին տակն ենք. բայց, հակառակ մեր գոչարդութեանը և մեր սխալներուն, անոնց համար անվթար կը մնայ մեր ազդեցութեան էութիւնը: Ուժին նախընտրած զոհերը ըլլալով, ուժը չեն յարգեր այն մոլեռանդական յարգանքովը զոր ուրիշներուն կը ներշնչէ ան. իրենց փորձութիւնները իրենց սորվեցուցած են իրաւունքին պաշտամունքը և յետսագրաւորները: Իրենք պէտք ունին որ աշխարհի մէջ ի նպաստ տկարներուն հնչէ հաւատքի և յոյսի Բանը: Արդ, ի մեծ պատիւ մեզի, մեր կառավարութիւնները Ֆրանսայի ո՛չ միակ եւ ո՛չ էն հաւատարիմ արտայայտութիւնն են: Աշխարհի մէջ մեր հայրենիքին նախարարներն ու զեսպաններն են մեր խորհուրդները, մեր իրաւագէտները, մեր պատմաբանները, մեր հրապարակագիրները, մեր զրագէտները: Ամէնէն պէս պէս ձեւերու ներքեւ, ասոնք ամենքը կրնան պատկանելի, համամիտ եւ խորտաճնչակ վկայութիւն մը տալ ցեղերուն ինքնօրինութեան դատին ի նպաստ: Ահա՛ այն աշակցութիւնը զոր պալլեանեան ցեղերը մենէ մանաւանդ կը խնդրեն: Իրենց ազգային յոյսերը մեծ պետութեանց ակնկառոյց հաշիւները կը վրդովեն. մեծ պետութիւնները իրենց հետ ունին դրամատէրները. եւ զրամը կը վարէ մամուլը: Ասկից՝ դահլիճներու, շահերու եւ լրագիրներու զաշնակցութիւն մը առաջ եկած է՝ անդիտանալու համար անհարկի պահանջումները. ու պզտիկ ժողովուրդները գիտեն թէ լուսութեան ի՛նչ ահռելի գործիքներ են բեմը, մամուլը եւ հեռագիրը: Ո՛չ մէկ բան աւելի վտանգաւոր է իրենց, ո՛չ մէկ բան այնքան նուազեցուցած է իրենց կորովը վճռական մամբուն, ո՛չ մէկ բան այնքան անգթօրէն կը խեղդէ իրենց ապագայի հաւանականութիւնները քան այդ յամառ լուսութիւնը իրենց ցաւերուն, իրենց իրաւունքներուն, իրենց կեանքին մասին: Կը զգան թէ Ֆրանսա կրնայ խորտակել այդ չարիքը: Ֆրանսա գաղափարները աշխարհի մէջ ծաւալելու առանձնաշնորհումը ունի միշտ. կարծիքի հոսանքներ կը ստեղծէ հոն: Լոյսի ճառագայթներ իրողութիւններու վրայ որոնք այնքան խնամով մութի մէջ կը պահուին, անկողմնակալ վկայութիւններ այդ օտարով թրծուած բայց ինքնուրոյն ըլլալու կամքը ունեցող ժողովուրդներուն կացութեանը, յառաջգիմութեանը եւ հաստատամտութեանը մասին, հաւաստիք պիտի տային այդ տկարներուն՝ որոնք մեզ կը սիրեն՝ թէ աշխարհի մէջ տեղ մը կը զրաւեն եւ թէ զիրենք սիրողներ կան: Մեր լրագիրները, որոնք ամենուրեք կը սպասուին իբր ֆրանսական մտածման արձագանգները, ամենքն ալ յօժար չեն այդ մտածումը խեղաթիւրելու՝ Բէլժայէն, Վիէնայէն կամ Կ. Պոլսէն եկած հնչուն փաստերուն շնորհիւ: Անոնք հզօրապէս աշխատած պիտի ըլլային մեզի ի նպաստ եւ պալլեանեան ժողովուրդներուն ի նպաստ եթէ միայն ֆրանսական միտքը զբաղած երեւնար այդ ժողովուրդներով: Այդ երկիրներուն հանրային մարդիկը մեծ մասամբ Ֆրանսա մեծցած են. իրենց տղաքները տակաւին կու

զան հոն ստանալ մտքի բարձր մշակութիւնը. հետեւաբար մեր վարիչները այդպէս առիթը ունին ո՛չ միայն իրենց հոգածութիւնը արտայայտելու իւրաքանչիւր մարդու համար զոր իրենք կը կրթեն, հապա այն ցեղերուն՝ համար որոնց ներկայացուցիչն են այդ մարդիկը. մեր երիտասարդութիւնը այսպէս առիթը ունի ճանչնալու այդ օտարներուն յատկութիւնները, և անոնց հետ վեհ յոյսերու հաղորդութիւնը հաստատելու: Այդպիսի կը բաւէր որպէս զի Ֆրանսա վարիչ ազդեցութիւն մը ունենար պալլեանեան ազգայնութեանց վրայ: Եւ եթէ այս վարկէն օգտուէինք հաւասար հոգածութիւն մը ցոյց տալու համար ամէնուն, իրենց ապացուցանելու թէ իրարու պէտք ունին, եւ զիրենք եա կեցնելու հակառակորդութիւններէ որ իրենց ամէնուն կորուստը առաջ պիտի բերեն, հետզհետէ աւելի պիտի զօրացնէինք այն բնագոյր որ զիրենք կը մղէ իրենց ապագան ապահովելու՝ իրարու հետ դաշնակցելով: Ինչ որ կրնանք ընել, ընենք: Այն սկզբունքները որոնց կը կրթին պալլեանեան ցեղերը, մե՛րն են: Անոնց դատը ուրանալը՝ մենք մեզի հակասել պիտի ըլլար. պահենք մեր առանձնայատկութիւնները զոր ոչ մէկ կառավարութիւն կը ճգնի մեր ձեռքէն խլել, եւ որ մեզի ազդեցութիւն մը տուած է աշխարհի վրայ, եւ ամենուրեք ուր ուրիշին իրաւունքը ոտքի կ'ելլէ, չխորհինք թէ այդ ուրիշը մեզի օտար է, խորհինք թէ իրաւունքն ըլլալով, պարտք մը ունինք անոր հանդէպ: Պալլեանեան թերակղզիին մէջ մարտնչող իրաւունքը ուրիշ երկիրներու մէջ պաշտպանած ըլլալու համար, զոհը եղանք ազգայնութիւններու որոնք մեր խնամքովը վերահաստատուած էին. բայց հիմակ մամանակը չէ այդ իրաւունքը ուրանալու: Ազգայնութիւնները մեզի դէմ ի գործ դրին բոլոր չարիքը որ կրնային, և իրենց յառաջիկայ բնաշրջումներուն մէջ, պիտի սկսին դարմանել ատիկա, որովհետեւ ազգայնութեանց տրամաբանական զարգացումը կը ձգտի բաժնելու մեզի թշնամի մեծ Պետութեանց միացեալ զանգուածները: Եթէ ուրիշ բան չունենայինք յուսալիք բայց եթէ համակրանքը 1867 միլիոն մարդիւր որոնք պատերազմի եւ խաղաղութեան համար Եւրոպայի ամէնէն կարեւոր մասերէն մին կը բնակին, այդ առաւելութիւնը արհամարհելիք բան մը պիտի չըլլար: Բայց պալլեանեան պետութիւններուն հետ մեր համակրութիւնը մեզի համար ա՛լ աւելի թանկագին պիտի ըլլայ, եւ շատ ազդուապէս պիտի ծառայէ մեր ընդհանուր քաղաքականութեանը: Մեր առաջին շահն է հակակշիռներ գտնել երբեակ նիզակակցութեան: Ազգայնութիւնները մեզի կապելով, ո՛չ միայն հաւանականութիւն ձեռք կը բերենք անոնցմով Աւստրիան զսպելու եւ զբաղեցնելու, հապա նաեւ Աւստրիոյ արտաքին աշխարհավարութիւնը եւ ներքին կեանքը փոխելու կ'աշխատինք: Սլաւական ձգտումներուն մէջ քայքայման սկզբունք մը կայ երբեակ նիզակակցութեան համար, եւ վերանորոգման կամ մահուան սկզբունք մը՝ Աւստրիոյ համար: 1867էն ի վեր, 8 միլիոն Գերման և 7 միլիոն Մաճառ հաւատարապէս կը տիրեն Աւստրիոյ

24 միլիոն սլաւներուն վրայ: Մէկ քանի տարիէ ի վեր, կայսրութեան Չեխերը, Սլովէնները, Խորուածները և Տալմադները կը սկսին իրենքզիրենց հարցնել թէ ինչո՞ւ համար երկու ցեղ միայն, որոնք մանաւանդ մեծամասնութիւն չեն կազմեր, Պետութեան տէրն են, եւ թէ բնական ի՞նչ պակասութեամբ Սլաւները Գերմաններուն և Մաճառնե-րուն ընդածին ծառաները պիտի ըլլան: Այս անհեթե-թութիւնը պահպանող կարգ-կանոնը, մեծամասնութեան համբերութիւնը, հանրային խաղաղութիւնը միջազգայի մը կը նային տակնուվրայ ըլլալու համար: Եթէ Ֆրանսա իր համակրանքը արտայայտէ Սերպերուն և Պուլկար-ներուն նկատմամբ, ասոնց վստահութիւնը իրենց ապա-զային վրայ՝ պիտի աճի, ու հետեւանքը սա պիտի ըլլայ որ Աւստրիոյ Սլաւները աւելի դառնօրէն պիտի զգան իրենց լուծը, և այն օրը ուր Աւստրիոյ հպատակները իրենքզիրենց նուազ ազատ պիտի զգան քան Թիւր-քերուն նախկին հպատակները, այն օրը Աւստրիոյ-Հունգարիոյ անտրամաբանական երկուութիւնը իր վախ-ճանին պիտի մօտենայ: Եթէ Գերմանները և Մաճառնե-րը յամառին զանի պահպանելու, ասիկա խզումը պիտի ըլլայ այն դիւրարեկ կապին որ այնչափ բազմաթիւ թաղ կը միացնէ մէկ պլանու մը վրայ: Հունգարիա առանձին պե-տութիւն մը պիտի կազմէ, եւ ասիկա իր անկումը պիտի ըլլայ: Գերմանները Գերմանիոյ պիտի անցնին, որ սա-կայն պիտի տկարանայ այս յաւելումովը, որովհետեւ պի-տի զազրի Գերմաններուն միջոցաւ Աւստրիոյ Սլաւներուն տիրելէ. եւ ասոնք, հետեւելով ցեղի եւ շահերու նոյնու-թեան զօր ունին պալքանեան թերակղզիին ժողովուրդնե-րուն հետ, անոնց հետ մէկտեղ նոր պետութիւն մը պիտի կազմեն, բնականաբար Գերմանիոյ թշնամի: Եթէ ա՛լ նոյն իսկ «աշխարհագրական բացատրութիւն» մը չըլլալու ըս-պառնալիքին տակ, Աւստրիա հետեւեալի այն տրամաբա-նական գաղտնաբեր ուր ոտքը դրաւ այն օրը ուր Հունգա-րիան ազատագրեց, եւ երկուութենէն զաշնակցութեան անցնի, Սլաւները մեծամասնութիւն պիտի ունենան այդ գաշնակցութեան մէջ, մեծամասնութեամբ՝ գերակշռու-թիւն, եւ փոխարէնը պիտի հատուցանեն գերմանեամաճառ ազգեցութեանց որոնց տիրապետութեանը տակ կը գտնուին այսօր. — Աւստրիա, ան ատեն, փոխանակ լուծուելու յօ-լուս ուրիշ սլաւ պետութեանց, ինքն իսկ Սլաւներուն յա-ռաջապահը պիտի ըլլայ գերման փառասիրութեան ղէմ: Ամէն պարագայի մէջ, քաղաքականութեան առանցքը պիտի փոխուի, երբեակ նիզակակցութիւնը պիտի լուծուի, եւ մեզի օժանդակ պիտի ունենանք մաս մը այն ուժերէն որոնք մեզի կը սպառնան այսօր:

Ինչո՞ւ պիտի վարանկինք այդ արդիւնքը պատրաստե-լու: Ռուսիան զժգոհացնելու վախէն: Անշուշտ, թեթե-ւօրէն վարուելու չէ հզօր ազգի մը նիզակակցութեանը հետ. բայց ի՞նչ է որ արժէքաւոր կը զարձնէ նիզակակցու-թիւն մը: Այն օգուտը զոր իւրաքանչիւր նիզակակցի ան-կից կը քաղէ: Ո՞րն է մեր օգուտը: Հոնոսի կամ մանա-ւանդ Վոմբերուն վրայ, Ռուսիան մեզի կ'ապահովէ Գեր-

մանիոյ յարձակմանը ղէմ: Սահմանազրկի մեր նահանգնե-րուն, Ֆրանչ-Գոնդէի կամ Շամբանի համար վախու-տեղ չունենալը շատ բան է. բայց ատիկա ո՛չ Ալզազը ետ կը դարձնէ մեզի, ո՛չ Լոռնը, և որովհետեւ ընդհան-րապէս յարձակողը ան չէ՛ որ առած է ու կը պահէ, հա-պա ան որ ինքզինքը կողոպտուած կը համարի, մենք մեզի կը մնանք երբոր խնդիրը մեր կորսուած նահանգ-ները ետ պահանջելու վրայ է: Պաղեստինի և Սուրիոյ մէջ, ոչ ո՛ք այնքան եռանդով կը մարտնչի մեր հին գե-րակշռութեանը ղէմ որքան մեր նիզակակցիցը: Չինաս-տանի մէջ, մեզի կը խորհի՛ իր պահանջումները առաջ տանելու համար, ու ո՛չ թէ շահը մեզի հետ կիսելու հա-մար: Ասիկա Ռուսիոյ ղէմ պարտաւանք մը չէ, այլ մեզի ղէմ: Ասիկա իր գերը խաղաց, մենք մերինը չխաղացինք: Քաղաքական բարեկամութիւններու մէջ, ամէն մարդ ինք-զինքին համար կ'աշխատի, և միւսին կը թողու իր պա-հանջումները մէջտեղ դնելու հօգը. մենք բան մը չպա-հանջեցինք: Ժամանակը եկած է հրաժարելու այդ նիզա-կակցութենէն ուր կարծես Ռուսիոյ հաճոյ եղած տեղը անոր ետեւէն երթալու պատիւը կը բաւէ կոր մեզի: Կ'ու-զենք թիրիմացութիւններու եւ ցաւալի վարմութիւններու առաջըր առնել: Կ'ուզենք որ Ռուսիա իր բուն արժէքովը գնահատէ մեր աջակցութիւնը, գիտնանք վայելչօրէն ու յստակօրէն ըսել թէ մեր բարեկամութիւնը միշտ պատ-րաստ է ընդառաջ երթալու, բայց կ'ուզէ որ փոխադրեցը ստանայ: Նշանակեց աշխարհի այն մասերը ուր մեր շա-հերը էական կը թուին մեզի եւ ուր օժանդակութիւն կը յուսանք, եւ ո՛չ թէ մրցում: Ու չժածկեցեք թէ մեր սկզբ-բունքները եւ մեր ապահովութիւնը մեզի կը պարտադրեն պալքաններուն մէջ նպաստաւորել պզտիկ ժողովուրդնե-րուն անկախութիւնը և գաշնակցութիւնը, ընդդէմ գերմա-նութեան յառաջխաղացութեանը: Անշուշտ, ատով կը վեր-դրվենք քնէած քաղաքականութիւնը զոր Ռուսիա կը նախ-ընտրէ: Բայց որովհետեւ Սլաւներուն հանդէպ պարտքեր ստանձնած է, չի կրնար թող տալ որ ուրիշ ժողովուրդ մը զանոնք նպաստաւորէ եւ անոնց օգնէ՝ առանց ինքն ալ նպաստաւորելու և օգնելու, ու կամայ ակամայ մեզի պի-տի հետեւի: Ի՞նչ պիտի ըլլայ եթէ մենք անտես առնենք սլաւ ազգայնութիւնները: Որովհետեւ ոչ ոք անոնցմով պիտի զբաղի, Ռուսիա պատրուակ պիտի ունենայ զանոնք մոռնալու, առանց զանոնք խաբելու երեւոյթն ունենալու. եթէ մենք ասոյին պատերազմի բռնուինք, Սլաւները, մեզի անձանօթ մնացած ըլլալով, անտարբեր պիտի մնան մեր ճակատագրին. ու Ռուսիա, իր շահերը վտանգուած չտես-նելով կոռուի մէջ, պիտի փարձուի կռուի բռնուած ժողո-վուրդներուն անուշադրութենէն օգտուելի՛ ուզածին պէս կարչադրելու համար Ասիոյ ճակատագիրը:

Օրհնենք Պալքաններու սլաւ ժողովուրդներուն, եւ ու-ժովցնենք զանոնք. մեր գաշնակիցները պիտի ըլլան ա-նոնք, մանաւանդ Գերմանիոյ ղէմ. ուր որ բռնուին, Ռուսիա բարոյապէս բռնադատուած է միջամտելու: Այն-պէս որ մեր գործօն բարեացակամութիւնը այդ պզտիկ

ժողովուրդներուն համար՝ մեր միակ միջոցն է Ռուսիան մեր քաղաքականութեանը կապելու, իրեն արգիլելու որ զէպի Ասիա փախչի՝ երբոր մենք իրեն պէտք ունենանք Եւրոպայի մէջ, եւ հետեւաբար իրական դարձնելու մեր նիդակակցութիւնը:

ԷՒԻԷՆ ԼՈՄԻ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«Եւրոպական քաղաքականութիւն» բացատրութիւնը, իր սահմանները օրէ օր աւելի ընդարձակելով, այլ եւս աշխարհագրական նեղ շրջանակի մը մէջ քանի մը պետութեանց շահերուն ընդդիմադրութիւնը և ա՛նոնց պաշտպանութիւնը չի նշանակեր: Թերթ կարգացողը երբ հիմա՝ յօդուածի մը գլուխը այս երկու բառերը տեսնէ, իր միտքը խաւարակուած Ափրիկէն մինչեւ լուսաշող Ասիան վազելու է, միշտ սակայն Եւրոպա վերադառնալով, որպէս զի բան մը հասկնայ: Պոկնեբու երկիրը եւ Հայաստան, Պոլսն ու Պարսից ծոցը, Հնդկաց աշխարհը և Պալքանները, Դալբէժ, Բէքին, Վաշինկթոն, Ճիպրալթար, Բեյրպուրկ, Էրզրում, Լոնտոն, Պերլին, Իսկէնաէրուն, Բարիզ, Սէլանիկ, Վիեննա, Թարապուլուս, Հոռոմ, քաղաքականութեան անշրպետին մէջ իրարու ետեւէ կը վազեն, իրար կը վանեն, իրար կը քաշեն, իրար կը մղեն: Ո՛չ մեծ պետութիւնները՝ ինչպէս Անգլիա մը, Ռուսիա մը, Գերմանիա մը, ո՛չ պզտիկները՝ ինչպէս Մօնթէնէկրօ, Պուլկարիա, Սերպիա, ո՛չ ստրուկ ժողովուրդները՝ ինչպէս Հայը, Տիրզին, Եէմէնցին, կրնան իբեկնց կեանքը, ապագան այդ ընդհանուր շրջանակէն անջատուած, զուրս մնացած համարիլ: Այդ քաղաքականութեան շրջադրոշմին մէջ մեր երկիրը առաջնակարգ տեղ մը կը զբաւէ: Հայաստանի մէկ ծայրը զէմ ու զէմ կու գայ Եգիպտոսի՝ որ մինչեւ Բարեյուսոյ Գլուխը կ'երկնայ: Այդ ծայրը նաեւ Եւրոպայի եւ Ասիոյ մեծ զանրէն մէկն է Միջերկրականին միջոցաւ: Միւս ծայրը Պոլսոյ ճամբան է, որ Եւրոպայի սիրտը կը տանի: Իսկ իր ամբողջութիւնը իրեն կը կապէ Եւրոպան, Ասիան, Ափրիկէն: Մեր ցեղային յատկութիւնները, մեր զարգացումը, և մեր ազգայնութեան պահպանումին համար մեր հաստատաւ միտ նախանձախնդրութիւնը, միանալով մեր երկրին աշխարհագրական կարեւորութեանը, մեզի ալ բաժին մը նըշանակած են այդ քաղաքականութեան մէջ որուն օձապտոյտ ընթացքին թէ՛ ամբողջութեանը և թէ՛ մանրամասնութեանցը հետեւելու ջանադիր պէտք է գտնուինք:

* * *

Պալքանեան թերակղզիէն եւրոպական խաղաղութիւնը վտանգող ո՛ր եւ է պայթում չի վախցուիր առ այժմ: «Ֆրանսա Արեւելքի մէջ» կարեւոր յօդուածովը զոր հետըզհետէ կը թարգմանենք, մեր ընթերցողները կարող են որոշ գաղափար մը կազմել այն բազմադիմի կնճռատութեանց վրայ որոնք պալքանեան խնդիրները կը շրջապատեն, եւ մինչեւ իս՛կ ահագնապէս կը դժուարացնեն Մակեդոնիոյ Բարեկարգութեան հարցը: Թայմզ իր վիեննայի թղթակցին բերնովը այժմ կ'իմացնէ թէ 1897ին Ալբանիոյ եւ Ռուսիոյ միջեւ գոյացած պալքանեան համաձայնութիւնը վերջերս աւելի եւս ամրապնդուած ըլլալով, Եւրոպայի խաղաղութեան վիճակին շարունակութիւնը աւելի ապահովեալ է: Նոր քանի մը զէպքեր կ'ապացուցանեն այդ ամրապնդումը:

Սերպիոյ մէջ քանի մը շաբաթ առաջ պետական դատաստան մը տեղի ունեցաւ, Միլան նախկին թագաւորին զէմ սպանութեան մը փորձին առթիւ: Ընդհանուր կարծիքը այն է թէ այդ փորձը նոյն իսկ Միլանէն սարքուած մեքենայութիւն մըն էր, որպէս զի իր հակառակորդները ջանջախելու պատրուակ մը գտնէ: Հիմաւոր թէ անհիմն ըլլայ այս ամբաստանութիւնը, զատաստանը խայտառակութիւն մըն էր, բայց եւ այնպէս տկարացուցարմատական կուսակցութիւնը որ Միլանի թշնամին է: Թաղաւորահայրը ջերմ աստրիաւեր մըն է, և հակառակորդ ոռուսական քաղաքականութեան, զաւար ուղղակի ոռուսական շահերուն կը հակառակէր, բայց թէ՛ վիեննայի եւ թէ՛ Բեյրպուրկի զահլիճները ձեռնպահ մնացին, չուզելով ո եւ է պատրուակաւ խանդարել արդի ոռուսաւատրիական համաձայնութիւնը: Աւստրիոյ արտաքին գործերու նախորդ նախարար կոմս Քալնոքին էր որ պալքանեան պետութեանց ներքին գործերուն չմիջամտելու սկզբունքը Աւստրիոյ արեւելեան քաղաքականութեան հիմը հռչակեց: Իր յաջորդն ալ չչեղեցաւ Քալնոքի ուղղութեան: Հիմա ալ Ռուսիոյ զիւանագիտութիւնը կ'իւրացնէ այդ սկզբունքը: Հետեւաբար, կ'ըսէ Թայմզ, հարաւային Եւրոպայի կողմէն ոռուսաւատրիական ընդհարումի մը հաւանախնդրութիւնը շատ նուազած է:

Պուլկարիոյ Ֆերտինանտ իշխանին վիեննա այցելութիւնն ալ որ նոր տեղի ունեցաւ անհերքելի ապացոյց մըն է ոռուսաւատրիական համաձայնութեան ամրապնդումին: Էր ատեն մը որ այդպիսի այցելութիւն մը, եւ փառաւոր ընդունելութիւնը որով Ֆրանց-Եսզէֆ կայսրը պատուեց Պուլկարիոյ իշխանը, շատ կասկածներ պիտի յարուցանէին Բեյրպուրկ: Հիմա ոչ միայն դանգատի ձայն մը չի լսուիր ոռուսական մայրաքաղաքէն, այլ եւ Բեյրպուրկեան մամուլը կը յայտարարէ թէ իշխանը Բեյրպուրկի իր բարեկամներուն հետ համաձայնելէ յետոյ այցելեց Վիեննա:

Այս խնդիրներու մասին ոռուսական մամուլին հրատարակութիւնները եւս նկատողութեան աննելով, Թայմզ կ'եզրակացնէ թէ այլ եւս վախ չկայ արեւելեան Եւրոպայի մէջ երկու պետութիւններուն մրցակցութեան հետեւանքէն:

Ռուսեւաւորիական համաձայնութիւնը այնքան ապահով
երաշխաւորութիւն մըն է խաղաղութեան պահպանումին
համար որքան Երրեակ Նիզակիցութիւնը կամ երրօ-
պական միաբանութիւնը :



Պաշտանեան թերակղզիին մէջ Ռուսիա հանդարտա-
պահութեան քաղաքականութիւնը կը պաշտպանէ, վասն
զի անդին Ասիա ամենածանր շահեր ունի որոնց ապահո-
վութեանը համար իր բազուկները Եւրոպայի կողմէն ան-
կաշկանդ պահել կ'ըզձայ : Ասիոյ շատ մը կէտերուն վրայ
Ռուսիա եւ Անգլիա ղէմաղէմ կը գտնուին, իրարու մրցա-
կից, իրարու նախանձուտ քաղաքականութեամբ : Ուստիա-
կան խնդիրներուն կարգադրութիւնը Եւրոպա կը պատ-
րաստուի : Ռուսիոյ արտաքին գործերու նախարար կոմս
Մուրաւիէֆ հոկտեմբերի սկիզբը յանկարծ Սպանիա զը-
նաց : Սպանիոյ մամուլը ջանաց նուազեցնել այլ այցե-
լութեան կարեւորութիւնը, բայց անգլիական մամուլը
Մուրաւիէֆի եւ Սպանիոյ արտաքին գործերու նախա-
րարին տեսակցութեան քաղաքական նշանակութիւն մը
վերադրեց : Այս առթիւ Մարկիսէ Բուսը ջանաց խմբա-
զրականով մը պարզել Մուրաւիէֆի այցելութեան ներ-
քին նպատակը : Արքունական մեծ թերթին այդ յօդուա-
ծը ամփոփ գաղափար մը կուտայ Ռուսիոյ եւ Անգլիոյ
ձգտումներուն վրայ, ուստի զայն համառօտաբար կը ծա-
նօթացընենք մեր ընթերցողներուն :

« Ռուսիոյ քաղաքականութիւնը գաղտնիք մը չէ, կ'ը-
նէ Մարկիսէ Բուսը : Իր ձգտումը յարձակողական է. կը
ջանայ իր ազդեցութիւնը իբր գերիշխան պետութիւն հաս-
տատել Ասիոյ մէջ, ուր անմիջական կէտ նպատակին Հիւ-
սիսային Չինաստանը եւ Պարսկաստանն է, ու երկրոր-
դականը՝ Հէրատ եւ Քապուլ տանող անցքերը : Անգլիա
Հիւսիսային Չինաստանի մէջ ոուսական ծրագիրներուն
զիմադրելու վարանելով, Ռուսիոյ հնարաւոր ընծայեց ա-
մենամեծ յաղթանակ տանել առանց հրացանաձգութեան :
Իսկ այժմ Ռուսիա անձկութեամբ կը հետամտի իր զիրքը
զօրացնելու եւ ամրապնդելու, ժամանակին շրջանը Անգ-
լիոյ ուրիշ բարեպատեհ առիթ մը հայթայթելէ առաջ : Իսկ
մինչեւ որ այդ առիթը հասնի, Ռուսիա կը ջանայ իր ու-
նեցած ամէն միջոցներովը Անգլիան տկարացնել, և յատ-
կապէս՝ ուրիշ պետութիւններ անոր ղէմ հանելով, վասն
զի Ասիոյ մէջ իր միակ վտանգաւոր մրցակիցը Անգլիան
է : Ռուսիա երկար ատեն Ֆրանսայի քաղաքականութեան
վրայ նշանաւոր ազդեցութիւն ունեցաւ : Գերմանիա տես-
նելով թէ Անգլիան մինչեւ որ իր շահերուն պաշտպանու-
թեանը համար ազգային քաղաքականութիւն մը ընդգրկէ՝
չի կրնար Ռուսիոյ ղէմ իբր աջակցութիւն մը նկատուիլ, լա-
ւազոյն համարեց Ռուսիոյ հետ լաւ բարեկամ ըլլալ և կըր-
ցածին չափ օգտուիլ Անգլիոյ պատահած դժուարութիւննե-
րէն : Հին աշխարհին մէջ Գերմանիոյ երկու մրցակիցներն
են Ռուսիա և Անգլիա : Բայց հիմակ Ռուսիա այնքան ծան-

րապէս զրազած է որ զեռերկար ատենի մը համար չի կըր-
նար զիրութեամբ Գերմանիոյ վտանգաւոր ըլլալ : Հետեւ-
աբար հիմա Գերմանիա ընդհանուր կերպով բարեկամօրէն
տրամադրեալ է Ռուսիոյ նկատմամբ, և Անգլիան դժուարու-
թեանց մէջ տեսնել կ'ըզձայ : Ասկէ զատ, շատ տարիներէ
ի վեր Գերմանիոյ նպատակն էր Ֆրանսայի բարեկամու-
թիւնը շահիլ : Մինչեւ Ֆաշտայի ղէպքը բիշ յոյս ունէր :
Ասկէ ետքը Ֆրանսա անդրադարձաւ թէ Գերմանիոյ ղէմ
իր ատելութիւնը նուազ է բաղդատմամբ Անգլիոյ վէմ ու-
նեցած ատելութեանը : Գերմանիոյ երազին իրականացու-
մը հիմակ կարելիութեան սահմանին մէջն է : Գերմա-
նիա, Ռուսիա եւ Ֆրանսա իրենց յատուկ սխառտանքերը
ունին որպէս զի Անգլիան, եթէ կրնան, բարորդին ա-
ռանձնացեալ թողուն : Մայրագոյն—Արեւելքի մէջ իրենց
գործակցութիւնը (չինեւճարոն պատերազմին ատեն) առա-
ջին փորձ մըն էր որ կրկնել կ'ըզձան, թէեւ հաւանօրէն
հիմկուհիմա պիտի չփափաքին ձեռնարկել այնպիսի գոր-
ծողութեան մը որ զիրենց զիւանագիտական կուսակէն
զուրս ձգէ : Ընդհանուր կացութիւնը այս ըլլալով, երեք
Պետութեանց նպատակին օգտակար պիտի ըլլար Անգլիոյ
բարոյապէս ո՛ր եւ է ստորնացումը, մանաւանդ եթէ անոր
հետեւանքները նիւթապէս ալ տկարացնեն կղզիական պե-
տութիւնը : »

Մարկիսէ Բուսը կը յայտարարէ թէ երեք պետութիւն-
ները կը կարծեն որ Հարաւային Ափրիկէի տազնապը բա-
րեպատեհ առիթ մըն է Անգլիան նեղ վիճակի մէջ ձգելու
համար, ու Մուրաւիէֆի ուղեւորութեան նպատակն է
եւրոպական համախմբում մը պատրաստել Անգլիոյ ղէմ
զոնէ բարոյական ցոյց մը սարքելու համար : « Հին աշ-
խարհին ծանրութեան կեդրոնը Եւրոպայի մէջ է, կ'ըստ
անգլիական թերթը. հոն է որ զօրութեանց հաւատարա-
կշուութեամբ կը կարգադրուին ափրիկեան եւ ասիական
խնդիրները : Ասիոյ եւ Ափրիկէի զոները Եւրոպայէն կը
փակուին ու կը բացուին, եւ բանալին ծովերու տիրապե-
տութիւնն է : Երկու հարիւր տարի է Անգլիա իր նաւա-
տորմովը բաց կը պահէ տիեզերքի ջրէ պողտանքերը. ո՛չ
մէկ պետութիւն կրցած է իր առջեւ ձամբան փակել, վասն
զի այդպիսի արգելք մը յարուցանելու համար պէտք է
եւրոպական պետութեանց միաբան գործակցութիւն մը :
Անգլիոյ արտաքին գործոց պաշտօնատունը այդպիսի միա-
բանութիւն մը արգիլելու պաշտօնը ունի, բայց Անգլիոյ
կառավարութեան մը պարտականութիւնն է միշտ կազմ
եւ պատրաստ գտնուիլ այդպիսի պատահականութեան մը
համար, միշտ պատրաստ գտնուիլ գործելու ուր որ պա-
տահականութիւնը հաւանականութեան կը վերածուի, եւ
նախ քան որ իրականութիւն ըլլայ : »



Կոմս Մուրաւիէֆ Սպանիա եւ անկէ Ֆրանսա այ-
ցելելով արդեօք Անգլիոյ ղէմ բարոյական ցոյցը մը միայն
նախապատրաստութիւնները կը տեսնէ, թէ աւելի ծանր

հարուած մը կ'ուզէ իջեցնել իր արցակցին պիտուն օգտուելու Պօէրններու դէմ անոր պատերազմական վիճակէն: Բեզրպուրիէն անգլիական մամուլին հաղորդուած տեղեկութիւնները կը հաւաստեն թէ Ռուսիա մօտերս Պարսկաստանէն կարելոր մաս մը գրաւելու կը պատրաստուի: Թայնգ բացարձակապէս կը յայտարարէ թէ այս յառաջիկայ տասերկու ամսուան մէջ Ռուսիա Պարսկաստանի դէմ կարելոր ձեռնարկ մը պիտի ընէ: Կրոյ կը հաստատէ թայնգին այդ տեղեկութիւնը: Բեզրպուրիէն Կրոյի զրուած թղթակցութիւն մը կ'ըսէ թէ Ռուսիա որոշած ըլլալով Պարսկաստանը ուշ կամ կանուխ իր կրօնկիւն տակ ճղմել, քաղաքական արդի կացութիւնը իրեն ձեռնտու կը համարի այդ նպատակին իրադրօթմանը համար: Ռուսիա ծրագրած է Քազպինի գրաւումը որ 56,000 բնակչով քաղաք մըն է, Թէհրանէն դէպի Հիւսիսային արեւմուտք 90 մղոն հեռու: Այդ քաղաքը Ռուսիոյ ձեռքերուն մէջ պիտի ծառայէ ուսական ազդեցութիւնը Պարսկաստանի ամբողջ Հիւսիսային մասին վրայ տարածելու:

Ռուսիոյ Քազպինը գրաւելու համար պատրուակ կ'ուզէ բռնել սեպտեմբեր 8ին հոն պատահած խռովութիւն մը որմէն փնտուցան երկու ուսուհիպատակ հայ: Մահմետական խուժանը այդ Հայոց տունները թալլեց ու կործանեց: Միանգամայն չարաչար նեղուեցան ուրիշ տասը անձեր որոնց երեքը ուսուհիպատակ: Մինչեւ որ ուսուհիպատակներուն փաստին հատուցում մը ըլլայ Ռուսները, Քազպինը իրենց իշխանութեան տակ պիտի պահեն:

Այս առթիւ Կրոյ կը դիտէ թէ սեպտեմբեր 8ի խռովութիւնը ծագեցաւ այն գաւառին մէջ ուրիշ կ'անցնի Ռէշտի եւ Թէհրանի միջեւ զինուորական պողոտան, զոր Ռուսիա շինեց եւ որ դեռ իր ձեռքն է:

Կրնանք ուրեմն կարելոր դէպքերու սպասել Հայաստանէն ոչ շատ հեռու շրջանակի մը մէջ:

Պարսկաստանի նկատմամբ ուսական ծրագիրները երբ իրականանան անգլիական ընդդիմադրութիւն մը հաւանական չ'երեւիր. բայց անհաւանական չ'է որ ի փոխարինութիւն Անգլիա ուրիշ ապահովութիւններ ստանայ արգելելու համար Ռուսիոյ յառաջացումը դէպի Պարսից ծոցը եւ դէպի Միջերկրական, որուն վրայ սակայն Ռուսիոյ աչքը յառած կը մնայ:



Ռուսիոյ դէպի Միջերկրական յառաջացման պատահականութիւնը Հայոց համար կենսական կարելորութիւն ունի. մեր ազգային մահու ե կեանքի խնդիրն է որ կը յուզուի: Ռուսիա պիտի չկրնայ Վոսփորի ճամբով յառաջանալ Միջերկրական: Իր դէմը պիտի գտնէ նախ Աւստրիան, սրուն հետ սակայն կատարեալ համաձայնութիւն գոյացուցած է Պալքանեան պետութեանց արդի վիճակին պահպանմանը համար: Բայց երկրորդ Վոսփոր մը կայ որուն միջոցաւ Ռուսիա կը յուսայ իր նպատակին հասնիլ. այդ երկրորդ Վոսփորը Կիլիկիոյ նաւահանգիստը, Ալէքսանտրէթ

կամ Իսկէնտէրունն է, որ հետզհետէ Եւրոպայի ուշադրութիւնը աւելի եւ աւելի կը գրաւէ: Կը յուսանք որ եւրոպական շահերը, որոնք մեզի այնքան մահաբեր եղան ուրիշ պարագաներու մէջ, այժմ Ռուսիոյ չ'թոյլատրեն Կիլիկիոյ գրաւումը, որուն հասնելու համար պէտք է Հայաստանին տիրել: Կիլիկիոյ աշխարհագրական մեծ կարելորութիւնը հաւանօրէն Հայաստանն ալ ուսական լուծին տակ անցնելու վտանգէն կը փրկէ, թէեւ, ինչպէս գիտենք, Ռուսիա, իր հեռատես եւ երկայնամիտ քաղաքականութեամբ, մէկ կողմէն կ'աշխատի Հայոց արեւմուտք իր յառաջացման ճամբան հարթել:

Բարիզի Լա Նովէյ Ռոլիշ հանդէսին հոկտեմբեր 1ի թիւը Սուրիա ուղեւորութեան մը պատմութիւնը կը պարունակէ. այդ յօդուածին մէջ Իսկէնտէրունի, հետեւաբար եւ ամբողջ Կիլիկիոյ, աշխարհագրական դիրքը եւ անոր հետ քաղաքական կարելորութիւնը հետեւեալ նկարագրութեամբ կը պարզուի:

Ուղեւորը Պ. ալ Քուլմանսոն որ 1895-96ի դէպքերէն առաջ ալ Սուրիա այցելած էր, այս նոր ուղեւորութեանը շատ փոխուած կը գտնէ երկիրը: «Խեղճ Արեւելք, կը գոչէ, ինչքան կերպարանափոխ գտանք զինքը: Հայկական ջարդերը, ամէն դաւանանքի քրիստոնեաներուն թշուառութիւնը, ֆրանսական ազդեցութեան դէմ յարձակումները, Ռուսիոյ յառաջդիմութիւնները, ամերիկեան միսիոնարութեանց գրամը, Անգլիոյ գաղտնի մեքենայութիւնները, զերման կայսրութեան նորածագ արեւը, յաճախանքը վերջապէս բոլոր ախորժակներուն եւ ցանկութիւններուն որոնց դասական ժամադրավայրն է Արեւելքը, այս ամէնը մեր դէմը ելաւ երբ ոտքերնիս ցամաքը զրինք, ու ա՛լ մեզ չ'թողուց մինչեւ այն օրը ուր մեկնեցանք անկից»:

«Իսկէնտէրուն, ահա խոստանալից բառ մը որ միշտ կը յիշուի Արեւելեան խնդրին առթիւ յեղեղուած քաղաքի մի ծրագիրներուն մէջ: Նաւագներուն համար, նաւատորմի մը անցոյթ ապաւէն ընծայող միակ'ն նաւահանգիստն է ասիկա Սուրիոյ ծովեզրերին վրայ, ուր նաւահանգիստներուն շատը, դէպի հարաւ բացուած, քիչ քիչ աւազով լեցուած են Եգիպտոսէն եկող հոսանքներէն: Իսկէնտէրուն շատ աւելի ընդարձակ եւ աւելի ապահով ապաւէն մըն է քան Հայֆան, որուն վրայ կ'ըսէին թէ Գերմանիա աչք տնկած է: Վաճառականներու համար, Սուրիոյ նաւահանգիստներուն էն կարելորն է ան, նոյն իսկ Պէրութէն աւելի կարելոր՝ առեւտրական փոխանակութեանց տեսակէտով: Իսկէնտէրուն ժամանման տեղին է կարաւաններուն որոնք Պաղտատէն, Մուսուլէն, Տիարպէքիէն, Ուրֆայէն կամ Հալէպէն մեկնելով, խաղաղութեան եւ բարգաւաճման դրութեան մը ներքեւ՝ դէպի Եւրոպա պիտի պարպէին իր բեղմնաւորութեամբը հոչակուած հողի մը հարստութիւնները: Հոն է որ կը մտադրուի չուկէտը հաստատել երկաթուղիի մը որ, Եփրատի վրայէն երկարելով, դէպի Պարսից ծոցը եւ Հնդկաստան յանգէր, եւ ցամաքի ճամբով Սուէզի ջրանցքին գործը

տեսներ: Իսկէնտերուն, վերջապէս, գլխաւոր նաւահան-
դիսաներէն մին է Փոքր-Հայքի, եւ, Վասիորէն յետոյ,
Ռուսերուն գէպի Միջերկրական իջնելու երկրորդ կարելի
ճամբան:»

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Մ Ա Ր

Այն պահուն ուր իր մարդասիրական Յայտարարու-
թիւնը մէջտեղ կը նետէր՝ Նիքոլա Բ. ձարը ամէնէն վատ
եղանքը ի գործ կը դնէր Յինչանտայի պղտիկ ժողովրդին
իրաւունքներուն եւ ազատութեանցը դէմ: Լա Հէյի Հա-
մաժողովին յաջորդ օրը, Անգլիա բանակ մը կը ղրկէ
Պօէրներուն դէմ, առանց կանխաւ իրաւարարութեան զիմե-
լու: Ու ահա կը տեղեկանանք թէ ջարդերը պիտի վերսկսին
Հայաստան. լուր կը տրուի թէ արիւնը կը հոսի արդէն
Սըվազի, Մուշի եւ Վանի վիլայէթներուն մէջ:

Եւրոպա նորէն հանդիսատես պիտի մնայ Կարմիր
Սուլթանին շահատակութեանցը՝ աչքերը անդին դարձնե-
լով, ահանջները խցելով, շլտելու համար ամբողջ ժո-
ղովրդի մը հոգեվարքի աղաղակը:

1894ի ջարդերէն ետքը, քաղաքակիրթ ազգերը բա-
րուրանք մը մէջտեղ դրին. իրենց կառավարութիւնները,
հրէշին մեղսակից, և իրենց զօշաքաղ մամուլը խաբեր
էր զիրենք: Մեր մէջ, Հանոթօ նախարարը լրբօրէն ստած
էր երկար ամիսներ. իր պարութեան մէջ ծրարներով հե-
ռագիր ունենալով օրօնք կը կանխատեսէին կոտորածը,
յետոյ զայն կը պատմէին, ու կը համբէին հրկիզուած գիւ-
ղերը եւ հարիւրաւոր կոշիկօճամահ քրիստոնեաները, Հա-
նոթօ Խորհրդարանին կը հաւատարմութեւ թէ «Ամէն բան
կարգին էր» Կ. Պոլիս եւ Փոքր-Ասիա:

Դեսպանին և ֆրանսացի հիւպատոսներուն նամակ-
ներն ու հեռագիրները կարգալէ եւ ծածուկ պահելէ ետքը,
Հանոթօ ներքողական յօդուածներ կը ղրկէր հանդէսնե-
րուն Ապտիւլ Համիտ սուլթանին վրայ: Իր պաշտօնա-
տունը կ'ընդունէր անարգ մամուլին տէրերը: Էքզիտ Պատ-
ուոյ Լէգէոնի Խաչեր կը ստանար. Ժոշուաչ տէ Տէպայի
վարիչները քարափնորու և փարոսներու արտօնութիւններ
կը շահէին. ուրիշներ հնչուն դրամ կը վատակէին. Մար-
դասպանին ահագին հարստութիւնը իրեն թոյլ կուտար
շուայթօրէն վարձատրել իր մարդիկը:

Մեծ կոտորածէն ի վեր, սպանութիւնները երբեք բո-
լորովին չզղործեցան թէ՛ Կ. Պոլիս և թէ՛ գաւառները, հա-
զարաւոր զոքարդներ լախտին կամ դաշոյնին տակ հոգի-
նին աւանդեցին: Դահիճները բնաջնջման նոր միջոցներ
գտան, սովը կազմակերպելով, անօթի Հայերը քշելով
տանելով տարհապարհակ աշխատութեանց, ճամբանե-
րուն վրայ օրօնք անսնց զիակներովը ծածկուեցան ընդ-

հուպ: Միակ նահանգի մը մէջ, 40,000 որբ համբեցին,
մերկ, անօթի, ցուրտէ և թշուառութենէ կիսամեռ, նոյն
իսկ ա՛լ սերայներուն համար ծախուելու ահաբի բազդէն
զրկուած, որովհետեւ մարդկային մսի շուկան լեփ լե-
ցուն էր:

Կաթոլիկ միաբանութիւնները այս արհաւիրքը սասու-
կացուցած են ամէնէն անարգ շահագործով: Այդ վանական-
ները և մարապեաները օրօնք այստեղ, իրենց Սոգոմի
վանքերուն մէջ, ինչպէս ամէն օր կը տեսնենք, իրենց
անորակելի մոլութիւնները կը տարածեն, ձերբորուն թըշ-
ուառութիւնը կը շահագործեն, որբերը եւ խելագարները
կը շարչրկեն՝ զանոնք իրենց կարողութեան անլի աշ-
խատեցնելու համար, անդին՝ Հայերը հաւատուարացութեան
և մահուան մէջտեղ գնելու գիտը ըրած են: Հոռմական
եկեղեցիին գիրկը մանող հաւատուարացներուն՝ վանական-
ները և մարապեաները ապաւէն մը կ'ընծային վանքին մէջ,
ջարդի ատեն, ու պատառ մը հաց՝ անոնց զակներուն
համար: Եթէ ոչ, Քիւրտերուն և Համիտիներուն գաշոյնը,
շարչարանքը, ծայրատուժը, սերայը:

Ու նոր կոտորածներ կը պատրաստուին:

. . . Ամբողջ Եւրոպայի՝ անկ է իր պարտքը ճանչնա
և կատարել զայն վերջապէս, որովհետեւ ամբողջ Եւրո-
պան է Հայաստանի դժբաղդութեանց պատճառը. խաղա-
ղասիրական համաժողովներու և մարդասիրական յայտա-
րարութեանց ամբողջ կեղծիքին հակառակ, Եւրոպան է որ
համերաշխաբար անլուր եղեռնի մը պատասխանատուու-
թիւնը ստանձնած է:

Սուլթան Ապտիւլ Համիտ հրէշային մարդասպան մըն
է. գիտենք ասիկա. Փոքր-Ասիոյ մէջ ամէն բան իր բա-
ցորոշ հրամանովը եւ յատուկ հրահանգովը կատարուե-
ցաւ. ասիկա ծանօթ է: Բայց բանի՛ մը չի ծառայիր ան-
դադար կրկնել ասիկա, եթէ ո՛ր եւ պատժի մը չյանգի
ատ: Նախատինքները զոր մեր ապահով զիրքէն կ'ուղ-
ղենք վայրի գազանին, ուրիշ արդիւնք չեն ունենար բայց
եթէ զինքը կատղեցնել իր ճանկերուն մէջ բռնած զոհե-
րուն դէմ: Մէկ բան մը միայն կրնայ փրկել ողջ մնացած
Հայերը. — Պետութեանց համաձայնութիւնը և անմիջա-
կան միջամտութիւնը:

1878 մարտ 3ին, Սան-Սթեֆանոյի դաշնագրին մէջ,
Ռուսիա 16րդ յօդուած մը մտցուցած էր որ Թիւրքիոյ
վրայ պարտք կը դնէր Փոքր-Ասիոյ մէջ անմիջապէս ի գործ
դնել հարկաւոր բարենորոգումները, և որ Հայերուն ապա-
հովութիւնը կ'երաշխաւորէր ընդդէմ Քիւրտերուն և Չեր-
քէղներուն: Այնքանտր Բ կայսրը ատով կը փոխարինէր
այն ծառայութիւնները որ ստացած էր իր հայ զօրավար-
ներէն՝ պատերազմի միջոցին. մարդկային զգացման մը
կ'անսար, միանգամայն եւ քաղաքական ծրագրի մը: Հա-
յաստան Ռուսիոյ պահպանութեանը տակ պիտի գտնուէր,
զուցէ շահախնդիր բայց ապահովապէս իրական և ազդու
պահպանութիւն մը:

Տէրութիւնները միջամտեցին, Սան-Սթեֆանոյի դաշ-
նագիրը պատուեցին ու անոր տեղ Պերլինի ընդհանուր

զաշնագիրը գրին: Այս անգամ, տարտամ 61րդ յօդուած
մը բարենորոգումներ պահանջեց Հայաստանի համար,
առանց պայմանադրելու ո՛չ պայմանաժամ ո՛չ հրաշխա-
ւորութիւն:

Երևորդ Բէօշկի հրէշը ինչ եզրակացնելու էր ասկից.
Թէ կատարեալ ազատութիւն ունէր, և Եւրոպայի լիուրի
հաւանութիւնը, իր գոհը լմնցնելու: Տեսած էր որ բովան-
դակ Եւրոպան Ռուսիոյ կ'արգիլէր Հայերը պաշտպանել.
յետոյ տեսաւ որ բովանդակ Եւրոպան անզգած կը մնար
զարհուրելի շարդերու առջեւ: Վերջերս, Երուսաղէմի մէջ,
Վիլհելմ կայսրը, զանազան եկեղեցիներու պատրիարք-
ներուն շքանշաններ բաշխելով, հայ պատրիարքին միայն՝
առանց ազամանդի շքանշան մը տուաւ, աղէկ ցոյց տա-
լու համար իր թշնամութիւնը ընդդէմ գոհերուն. ասիկա
ուրիշ ինչ է բայց եթէ քաջալերութիւն դահիճին: Սույ-
թանը ասիկա այդպէս հասկնալու էր, և այդպէս ալ հաս-
կըցաւ:

Մեծ Մարդասպանը՝ Ապտիւ-Համիտը չէ. Մեծ
Մարդասպանը՝ Եւրոպան է: Հայերը քաղցրաբարոյ, աշ-
խատասէր, քաղաքակիրթ, քրիստոնեայ ժողովուրդ մըն
են. Եւրոպա Պերլինի դաշնագրով իր վրայ առած է Հայե-
րուն հոգը: Եւրոպա ցրտօրէն թող կուտայ Հայերուն
բնաջնջումը, որովհետեւ իր ժողովուրդները վատ են, ո-
րովհետեւ իր զրոյնները ծախուած են, որովհետեւ իր
կառավարութիւնները ուրիշ մտմտուք չունին բայց եթէ
ցած խարդաւանանքներ՝ անարգ նպատակներու համար:
Ինչ ամօթ:

ԻԻՐՊԷՆ ԿՕԻԷ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Նոր Կեանքի հոկտեմբեր 1 ի թիւը հրատարակուելէն
մինչեւ այսօր, հոկտեմբեր 15, պատրիարքական տագ-
նապին վրայ Կ. Պոլսէն ստացուած հեռագիրները թուա-
կանի կարգով կը հաղորդենք:

Կ. Պոլիս, հոկտեմբեր 7

Հայոց պատրիարքը, Տէր Օրմանեան, երէկ իր հրա-
ժարականը դատական գործոց նախարարին մատուց, իբր
բողոք մը ընդդէմ այն միջոցներուն որոնք օսմանեան
կայսրութեան ներսերը Հայոց երթեւեկութիւնը կ'արգի-
լին: Սուլթանը խոստացած ըլլալով Հայոց խնդրանքնե-
րուն շուտով գոհացում տալ, Տ. Օրմանեան զիջաւ իր
պաշտօնը գեռ քանի մը օր ալ շարունակել:

Հոկտեմբեր 9

Սուլթանը Հայոց պատրիարքին հրաժարականը այսօր
ետ դարձուց, և դատական գործերու նախարարութիւնը

բացարձակապէս խոստացաւ խնդրի առարկայ եղող ամէն
կէտերուն շուտով գոհացում տալ: Այսու հանգերձ Հա-
յոց պատրիարքը իր հրաժարականը ետ չ'առնեմ, մինչեւ
որ տրուած խոստումները ամբողջապէս գործադրուին:

Հոկտեմբեր 11

Այսօր կայսերական իրաւէ մը ելաւ, որ կը վաւե-
րացնէ հայկական բարենորոգումներու ուսումնասիրութեանը
համար Երևորդ-Զէօշկը յատկապէս կարգուած պատուի-
րակին հետեւեալ յանձնարարութիւնները.

1. Նահանգները Հայոց երթեւեկութիւնը արգիլող
մասնաւոր տնօրինութեանց շնջումը, բացի կատկածելի
անձերու պարագայէն:
2. Հայկական խողովութեանց ատեն քանդուած եկե-
ղեցիներու, դպրոցներու, վանքերու վերաշինութիւն կամ
նորոգում, կառավարական օգնութեամբ:
3. Կոտորածներու միջոցին սպանուած կամ իրենց
պաշտօնէն հրաժարած հայ պաշտօնեաներուն առնելիքին
վճարումը:
4. Պոլսոյ մօտ Եէտի-Գուլէ, որբանոցի մը կառու-
ցումը:
5. Բանտարկուած 54 հայոց ներում, և 24 հայու
դէմ տրուած մահուան վճին մշանջնական բանտար-
կութեան վերածում:

Արթին փաշա այսօր Հայոց ազգային վարչութեան
հաղորդեց այս իրատէն: Հայոց պատրիարքը հիմակ ետ
պիտի առնէ իր հրաժարականը: Իրատէն կատարեալ գո-
հացում կուտայ Հայոց խնդրանքներուն:

Բարենորոգումներու գործադրութիւնը սակայն ապա-
դայի խնդիր մըն է:

Հոկտեմբեր 12

Հայոց խնդրանքներուն վերաբերեալ երէկուան իրա-
տէն տակաւին պաշտօնապէս Դրան չհաղորդուեցաւ:

Հոկտեմբեր 13

Հոկտեմբեր 11 ի իրատէն Հայոց կողմէն գոհացուցիչ
չնկատուելով, պատրիարքը հրաժարականը ետ չ'առաւ:

* * *

Պատրիարքական տագնապին վրայ մեր տեսութիւնը
կը պարզենք առաջնորդուելով վերջին հեռագրէն: Մինչեւ
հիմակ կարելի չեղաւ ստուգութեան մօտեցող հաւանա-
կանութեամբ մեկնել թիւրքիոյ Հայոց գերագոյն ներկա-
յացուցչին խորհուրդները: Հայ ազգը Օրմանեան պատ-
րիարքէն թէ՛ ճարպիկ լարախաղացութիւն մը, թէ՛ ուղ-
ղամիտ քաղաքականութիւն մը հաւասարապէս կրնայ
վախնալ կամ յուսալ: Բայց հրաժարականէն ի վեր հա-
սած տեղեկութիւնները ենթադրել կուտան թէ պատրի-

արքը ազգային կարծիքին արտայայտութեան մէջ գտած
ըլլալու է կողմնացոյցը որ անմուր ճամբան պիտի մտցնէ
զինքը: Մաղթենք սակայն որ Նոր կեանքը հրա-
տարակուսելէն յետոյ ուրիշ հեռագիր մը ազգը յուսախաբ
չընէ:

Ուրեմն առ այժմ կը նշմարուի թէ պատրիարքը կը
զգայ որ մանր մունր զիջողութիւնները պիտի չկրնան
հայ ազգը զոհացնել: Երբ ժողովուրդ մը ամէն օր կը մար-
տիրոսանայ, երբ ժողովրդի մը միտքը, ստացուածքը,
խիղճը, պատիւը, ամբողջ կեանքը ամէն օր զարհուրելի
բռնաբարութիւններով կը մահանան, այդ ժողովուրդը կամ
իր բանականութիւնը կորսնցուցած ըլլալու է, կամ յու-
սահատութեան ծայրը պէտք է հասած ըլլայ որպէս զի
քանի մը նիւթական շէնքերու խնդիրը, կամ երթեւեկու-
թեան համար ոմանց խոստացուած դիւրութիւնները զինքը
գոհացնեն: Այսպէս ուրեմն պատրիարքարանին յիտուն
տարուան բողոքները, Հայաստան ու Պոլիս թափուած ա-
րիւնը, Երոսպայի մէջ հայկական խնդրին ստացած կարե-
ւորութիւնը, պիտի վերջանան քանի մը ոչնչութիւններով:

Հայաստանի բարենորոգումներու խնդիրը մահացնե-
լու դաւադրութիւն մըն է այդ իրատէն: Բիւթէրի հեռա-
գրին նպատակն է խայտառակել հայութիւնը, ոչնչացնել
ժողովրդին յուզումին նշանակութիւնը, և բարեկարգու-
թեան խնդիրը թաղել: « Հայ ազգը զոհ է իրատէին տրա-
մադրութիւններէն, և պատրիարքը իր հրաժարականը ետ
պիտի առնէ » կը հեռագրէ Բիւթէրի ազգեցիկ և հեղինա-
կաւոր գործակալութիւնը: Բիւթէրին ո՞վ տուած էր այս
դաւադրական տեղեկութիւնը: Այդ գործակալութիւնը
շատ զգուշաւոր է: Մուսա պէյի խնդրէն ի վեր — եթէ մի-
այն այդ մամանակամիջոցը նկատողութեան առնենք —
Պոլիս իրարու յաջորդող Բիւթէրի չորս կամ հինգ գոր-
ծակալները մինչեւ հիմակ միշտ Հայոց նպաստաւոր ե-
ղած են, ճշմարտութիւնը անկեղծօրէն հաղորդելով: Վըս-
տահելի ազդեւորներ կը փնտոնեն, ու երբ խաբուին յան-
ցանքը իրենցը չէ: Շատ հաւանական է որ այդ հեռագրի-
րը ներշնչուած ըլլայ Տատեան Արթին փաշայէն, որ ա-
տենէ մը ի վեր է շարաշար կը գործածէ Պոլսոյ երոսպա-
կան թղթակիցներու վստահութիւնը: Արթին փաշան որ
կեդրոնական վարչութեան կը հաղորդէ կայսերական ի-
րատէին յուրը, զայն կը հաղորդէ նաեւ հեռագրական
գործակալներու: Օրմանեան պատրիարքը սակայն պնդե-
լով իր հրաժարականին վրայ այն յայտարարութեամբ
թէ իրատէին տրամադրութիւնները չեն գոհացնիր հայ
ազգը, ուղղակի և գործնականապէս հերքած եղաւ Բիւ-
թէրի գործակալութեան սուտ տեղեկութիւնը: Արգարու-
թիւնը կը պահանջէ ընդունիլ որ Օրմանեան պատրիարք
այս պարագային մէջ խղճամիտ վարուեցաւ:

Իրատէին հինգ տրամադրութեանց քննութեամբը
զբաղիլ չենք ուզեր այսօր, մանաւանդ որ պատրիարքը
ինքն իսկ անոնց ոչնչութիւնը հասկցած է. բայց պէտք
է իբր ստոյգ իրողութիւն ընդունինք պատրիարքին շուր-
ջը դաւադրութեան մը գոյութիւնը: Շատ կը վախնանք որ

Օրմանեան պատրիարք տկարանայ խաբուի, և այս քանի
մը օրուան մէջ գտած համակրանքն ու յարգանքը նորէն
կորսնցնէ: Երբ այս դաւադրութիւնը պատահի հետեւանք,
նորուն պատասխանատուն անշուշտ ազգը չէ: Իսկ եթէ
Օրմանեան պատրիարք հաստատամտութեամբ շարունակէ
իր ազգային քաղաքականութիւնը, անտարակոյս ամբողջ
հայ ժողովուրդը իրեն զօրավիպ և աջակից պիտի գտնէ:

Պատրիարքին գէմ Հայաստանի և Պոլսոյ ակներեւ
տեղեկութիւնը, արտասահմանի ցոյցերը անգամ մը ևս
կը հաստատեն այն ճշմարտութիւնը թէ հայ ազգին
բարձրագոյն պաշտօնատարը միշտ ազգային հսկողութեան
ներքեւ է: Այդ հսկողութիւնը եթէ օրինական միջոցնե-
րով չի գործադրուիր, անկանոնութեան պատասխանատուն
ազգը չէ: Ազգը չէ որ Պոլիս իր մամուլը շղթայած է,
ազգը չէ որ պետական հարուածով օրէնքը դադրեցուց-
ւայց մոռնալու չէ որ Թիւրքիոյ Հայերը ամէն ատեն մա-
մուլ չեն ունեցած, և ոչ ալ ամէն ատեն Ազգային կանո-
նաւոր ժողովներ, բայց հինգ դար է որ միշտ պատրիարք
ունեցած են, ու միշտ ալ պատրիարքներուն վրայ հսկած:
Այդ հսկողութիւնը օրէնքին սահմաններուն մէջ չէր կա-
տարուեր, և բնականաբար ամէն տեսակ զեղծումներու
տեղի կուտար: Պատրիարքները ամիրաներուն քմահաճոյ-
քին, կրքին, շահերուն, իրարու գէմ ունեցած ատելու-
թեան զոհերն էին: Սահմանադրութիւնը բարձրացուց
պատրիարքներուն դիրքը, և օրէնքին հսկողութիւնը ու զօ-
րութիւնը ապահովեց անոնց: Ո՞վ է յանցաւորը եթէ Հա-
յոց պատրիարքը իր բարձրահայեաց ու անառիկ ամբողջին
մէջ պատուարուած չի մնար: Ո՞վ զարեցուց օրինական
հսկողութիւնը: Հայոց պատրիարքութիւնը փոխանակ ե-
րեսփոխանական մարմնի մը իշխանութեանը, ուղղակի մա-
ղովրդին միջամտութեանը ենթարկելու գրութիւնը ո՞վ
ստեղծեց: Ի՞նչ ընէ ժողովուրդը երբ բերդապահը ինքն իր
ձեռքովը կ'ուզէ փլցնել զինքը պաշտպանող պարիսպը:
Հայ ժողովուրդը երբեք անպատասխանատու միապետու-
թեան մը պիտի չի յանձնէ իր ազգային կեանքը: Հայ
ազգին նկարագիրը խորապէս ուսմակարական է. իր
պատմութիւնը և իր հիմնարկութիւնները կը հաստատեն
այս ճշմարտութիւնը: Հայ ազգին ղեկավարները երբ ազ-
գին բնածին յատկութիւնները կը ճանչնան, երբեք չեն
սխալիր իրենց վարչական ուղղութեանը մէջ: Օրմանեան
պատրիարքին և իր քաղաքական ժողովին էն մեծ սխալը
հոն է որ կը կարծեն թէ ազգի մը քառսուն զարեւուսկա-
րագիրը կրնայ փոխուիլ կամ ջնջուիլ: Այսօր հայ ազգը
Հայաստան ու Պոլիս երկաթէ ահազին կափարիչի մը
ներքեւ ճգմուած կը մնայ. իր անդադրում խրտումները
սակայն ազգային հոգիին անմահութիւնը, ազգային նկա-
րագրին անփոփոխութիւնը կը հաստատեն:

Հայութեան բարձրագոյն ձայնը այսօր արտասահմա-
նէն կը լուի, Հայաստանի ազադակին արձագանգը: Այդ
գոռումը հզոր զօրութեամբ պիտի զօրացնէ պատրիարքը
եթէ անոր սիրտը ազնիւ է, և միտքը լայն: Ուր որ պէտք
է կրնայ յայտարարել թէ՛ Հայոց պատրիարքը իր ազգին

միակեծան անէր և իշխանը չէ որպէս զի իր կախածը՝ կախած, կտրածը՝ կտրած համարուի: Պատուիրակ մըն է. իրեն պաշտօն տուողներուն վստահութիւնը որքան ատեն որ վայելէ, ինքն ալ ազգեցութիւն կունենայ իր ժողովըրդին վրայ և կ'առաջնորդէ անոր: Եւ որպէս զի հայ ազգը իր պատրիարքին ետեւէն երթայ, պէնք է որ պատրիարքն ալ ազգին արդար և օրինաւոր պահանջումներուն պաշտպանը հանդիսանայ, և երկրին իշխանութիւնը իր ձայնը լսէ:

Պատրիարքը կարող է այս յայտարարութիւնը ընել առանց նեղուելու. վասն զի ինչ որ ժողովուրդը ուղղակի իրմէն կը սպասէ բնաւ «անբաղաբաղիտական պահանջում» ամբաստանութեան չենթարկուիր: Հայ ժողովուրդը, նոյն իսկ արտասահման, շատ աղէկ ըմբռնած է քաղաքական կացութեան ծանրութիւնը, երկրին ընդհանուր վիճակին խառնակութիւնը, ուստի և բնաւ ծայրայեղ չէ պատրիարքէն իր պահանջումներուն մէջ: Այսպէս օրինակի համար, մտքէն իսկ չանցընէր որ Օրմանեան պատրիարքը, իր նախորդներէն ոմանցնման, Հայաստանի տառապանքները եւրոպական պետութեանց Պոլսոյ զեօպաններուն ներկայացնէ. բայց կը պնդէ որ պատրիարքը ամբողջ ճշմարտութիւնը պատկերացնէ երկրին իշխանութեան աչքերուն առջեւ, և զարմանը ինչպէս: Պատրիարքին պարտականութիւնն է, և իր իրաւունքին սահմաններուն մէջ է, այս զիմուքը ամէն օր ընել: Ոչ ո'ք կ'ուզէ որ պատրիարքը Ազգային Յեղափոխականներուն օրհնութեան կոնգակ խրկէ, քաջալերէ զանոնք, բայց կը պահանջուի որ իր չէզոքութեան շրջանակէն դուրս չելլէ, և անտեղի հեռագիրներով մտքերը չի խռովէ: Ո՛չ ոք կը մտաբերէ պարտաւորել պատրիարքը հայկական հինգ նահանգներուն ինքնօրինութիւնը պահանջել քաղաքական սահմանադրութեամբ, բայց ամէն հայ կը յամառի ուզելու որ պատրիարքը չի թոյլատրէ ո' և է օտնձգութիւն ազգին արդէն ունեցած իրաւունքներուն մէջ, և անձնուր պահպանը հանդիսանայ Սահմանադրութեան զօր իր նախորդներէն աւանդ ստացած է:

Ա՛լ հայ ժողովուրդը սօրվեցաւ իրականութիւնը տեսնել և յարգել. ուստի և շատ չափաւոր է նոյն իսկ իր ամենաարդար պահանջումներուն մէջ: Այդ չափաւորութիւնը իր անյաղթելի ուժը պիտի ըլլայ:

Պատրիարքական տաքնապը ուրեմն դեռ մինչեւ հիմակ բաց կը մնայ. բայց պատրիարքին ընթացքը պարտականութիւն կը դնէ արտասահմանի Հայոց վրայ այլ և ո Օրմանեան պատրիարքին դէմ՝ ո' և է ցոյց, շարժում ընելէ զգուշանալ: Բայց նաև անտեղի պիտի ըլլայ համակրանքի ո' և է արտայայտութիւն, վասն զի վաղորդայնը զուշակելու անկարող ենք: Առ այժմ՝ բարեացակամ չէզոքութիւնը պէտք է պահել, սպասելով դէպքերուն: Եւ ինչ որ ալ ըլլան այդ դէպքերը, թէ պատրիարքը անմի-

ջապէս իր պաշտօնին գլուխը դառնայ, թէ շարունակէ իր հաստատամիտ ընդդիմադրութիւնը, ամէն պարագայի մէջ ալ արտասահմանի հայերը առանց հապճեպի, և զգուշութեամբ շարժելու են, վասն զի իրենք պիտի կրնան մեծ ազդեցութիւն բանեցնել Պոլսոյ գործերուն վրայ:

ԼՈՒՐԵՐ

ԿՈՎԿԱՍԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ. Կ. Պոլսոյ Ռոռասկան ղեկավար Պ. Չիկոյիկի հոկտեմբեր 8-ին ունեցողութեան ընդունուելով սոչրակէն, վերանորոգեր է Կովկասի հայ գաղթականներուն վերադարձի խնդիրը:

ԻՐԱՏԷ. Վերջին պահուէն հասած հետագիր մը կը ծանուցանէ. «Իոչար պաշտօնապէս Հայոց պատրիարքին ձեռնորդեց հոկտեմբեր 11-ին ելած կայսերական իրաւունքով Հայոց Ազգային Վարչութեան խնդիրները ընդունուած էին»:

ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ՄԱՐԴՆՈՊՈՆՈՒԹԻՒՆ. Թիւրք իշխանութիւնը օգոստոսի մէջ Էրզրում կախապէս հսկում է Արամ Արամեան երիտասարդը, իբր յեղափոխական: Մանքամասն տեղեկորէիներ կը պահպանէ: Հայ ազգը պարտականութիւն ունի այս մարդաստոր վայրագութեան համար Պատրիարքարանէն բացատրութիւն պահանջել:

ԱՆՍՏՈՂՈՒԻ Բարեկարգութեանց (°) ընդհանուր հսկիչ Շաքիր փաշայի մանուշակ շորը կը հատորդուի Սիւնուպէն:

ՀԱՍՏԷ ՈՒ ԲԱՍՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեկիր զրկել առ

L. FRANK,

32, CHESTERTON ROAD,

(ENGLAND)

LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին և 15-ին: Բաժնեկիրն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 և վեցամսեայ 1 տոլար: